

Ակնարկ լիբանանահայ մամուլի պատմութեան

ԺԻՐԱՅՐ ԴԱՆԻԷԼԵԱՆ

ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ ԾԱԳՄԱՆ ՇՈՒՐՋ

Ե՞րբ կեանքի կոչուեցաւ լիբանանահայ մամուլը, ի՞նչ պայմաններու տակ, եւ որո՞նք հանդիսացան անոր առաջին հիմնադիրները: Հարցեր են ասոնք, որոնք մինչեւ այսօր չեն դատած իրենց վերջնական պատասխանը:

Այս ուղղութեամբ ցարդ միայն Արտաշէս Տէր Խաչատուրեանն է որ կատարած է պրպտումներ եւ հայթայթած է որոշ տեղեկութիւններ(1): Մասնակի այլ աշխատանքներ կատարած են նաեւ ուրիշներ, սակայն անոնց հիմնական նպատակակէտը չէ հանդիսացած լիբանանահայ մամուլը:

1) Ա. Տէր Խաչատուրեան լիբանանահայ մամուլին նուիրած մէկէ աւելի աշխատասիրութիւններ ու ցանկեր պատրաստած է.

ա. Հայ Մամուլի Ցուցահանդէս (1794-1961), Պէյրուք, 1961:

բ. *Լիբանանահայ Մամուլը*, Հայ Աւետ. Գալէնի հրատ. «Լիբանանահայ Մշակոյթի Ծառաք» գրքոյկին մէջ, Պէյրուք, 1970: (Յետայսու՝ ԼՄ):

գ. *Արտասահմանի ներկայ Հայ Մամուլը*, Հայ Աւետ. Գալէնի «Սփիւռք Այսօր» ցուցահանդէսի առիթով հրատ. գրքոյկին մէջ, Պէյրուք, 1972:

դ. *Լիբանանահայ Մամուլի Յիսուն Տարին*, 1921-1971 թթ., «Հայկազեան Հայագիտական Հանդէս», Պէյրուք, 1971: (Յետայսու՝ ԼՄԾՏ):

ե. *Լիբանանահայ Մամուլը*, «Ազգակ» (օրաթերթ, Պէյրուք), 1960, Սեպտ. 24, թիւ 174:

Ըստ Ա. Տէր Խաչատուրեանի, 1920-ական թուականներուն սկիզբը կը հանդիսանայ նաեւ սկիզբը Հայ մամուլին՝ Լիբանանի տարածքին վրայ, անոր այսօրուան աշխարհադրական սահմաններուն մէջ: «Ճիւղէյլի թունոց Բոյնին մէջ է որ աշխարհ կու դայ լիբանանահայ մամուլի երախայրէքը - Հոսմեֆ (1922 թ.)»(2):

Նախապէս զրուած յօդուածի(3) մը մէջ, Ա. Տէր Խաչատուրեան լիբանանահայ մամուլի առաջին թերթը նկատած է Դիտարաւը եւ Գրիստոսի ներկայութեան Մուսեօսիկը, 1920 թ.ին լոյս տեսած Պէյրուսի մէջ: Հաւանաբար այս տեղեկութիւնը քաղուած է Յովհ. Պետրոսեանի «Հայ Պարբերական Մամուլի Բիբլիոգրաֆիա»ի Բ. Հատորէն, որուն մէջ վերոյիշեալ թերթը յիշուած է երկու տարբեր էջերու մէջ, անգամ մը որպէս Պրուքլին լոյս տեսած թերթ, անգամ մը՝ Պէյրուսի(4):

Աւելի ուշ, 1965 թ.ին, Հասկ ամսաթերթի մէջ Յովհ. Պետրոսեանի վերոյիշեալ դործին նուիրուած գրախօսականին մէջ, Ա. Տէր Խաչատուրեան կը գրէ, թէ Դիտարաւը... անունով թերթ լոյս տեսած չէ Պէյրուսի մէջ, այլ եղածը Պետրոսեանի մօտ շփոթ մըն է Պրուքլին եւ Պէյրուսի անուններուն միջեւ(5):

Արդարեւ, Պետրոսեանին յիշատակածը շփոթի մը հետեանքն է, շփոթ՝ որ շատ հաւանաբար արդիւնքն է Պրուքլին լոյս տեսած Դիտարաւը...ին կարգ մը թիւերուն մէջ տեղ դրած Պէյրուսի անոր դործակալին հասցէին գոյութեան:

Այսպէս, երբ լուսարանուած է Դիտարաւը...ով յառաջացած շփոթը, Ա. Տէր Խաչատուրեանին համար լիբանանահայ մամուլի երախայրէքը կը դառնայ Ճիւղէյլի Հոսմեֆը, որ ոչ թէ լոյս տեսած է 1922 թ.ին, այլ՝ 1921 թ.ին, ու եղած է Ճիւղէյլի որբանոցին աւարտական դասարանի երկչաբաթաթերթը(6):

2) Ա. Տէր Խաչատուրեան, ԼՄՅՏ, էջ 264:

3) Ա. Տէր Խաչատուրեան, Լիբանանահայ Մամուլը, «Ազգակ», ԼԴ. տարի, 1960, Սեպտ. 24, Բիւ 174:

4) Յովհ. Պետրոսեան, Հայ Պարբերական Մամուլի Բիբլիոգրաֆիա, հ. 2, Երևան, 1957, էջ 339 եւ 359: Ի դէպ, Պետրոսեանի յիշատակած քերթը լոյս տեսած է ոչ թէ 1920 թ.ին, այլ՝ 1921 թ.ին, Պրուքլին:

5) «Հասկ», ԼԴ. տարի, 1965, Բիւ 11-12, էջ 507:

6) «Հոսմեֆ»ի հրատարակութեան քուակամիմ (1921 թ.) մասիմ տես՝ Հ. Բ. Քոսեան, Լիպատար Յուլիոյ Հայերէն Լրագիրներու Որոնք կը Գտնուին Միւթարեան Մատենադարանի Մէջ Ի Վիեննա, «Համդէս Ամսօրեայ», ԼԴ. տարի, 1923, Բիւ 1-2, էջ 96, եւ՝ Յուլիոսեան Ճիւղէյլի Ամերիկեան Որբանոցի, Պէյրուս, 1969.

Ուրեմն, ցարդ տիրող կարծիքը այն եղած է, որ լիբանանահայ նորագոյն գաղութին կազմաւորման հետ, որպէս հետեւանք մեծ եղեռնի ու Կիլիկիոյ վերջին պարպումին, ծնունդ առած է նաեւ լիբանանահայ մամուլը, Լիբանանի դանազան վայրերուն մէջ (Ճիւղէյլ, Նահր Իպրահիմ, Ճոնի) կայք հաստատած որբանոցներէն ներս :

Արդեօ՞ք նախա-եղեռնեան շրջանին, Ա. Աշխարհամարտէն առաջ, Լիբանանի եւ յատկապէս Պէյրութի հայ գաղութը չէ ունեցած թերթ, հոպ չէ թէ համեստ՝ բովանդակութեամբ եւ ձեւով : Արդեօ՞ք պատերազմի աւարտին, մինչեւ 1921 թ.-ը, թերթ ունենալու ուղղութեամբ ճիւղեր չեն եղած : Այս հարցումներուն պատասխանելու համար, հարկ է որոշ գաղափար մը կազմել այդ թուականներուն դոյութիւն ունեցող հայ գաղութին մասին :

Ընդհանրապէս կը գրուի, թէ Ի. դարու սկիզբը հազիւ 40-50 ընտանիք կը հաշուէր Պէյրութի հայ գաղութը, որ մեծ մասամբ կազմուած էր 1896 թ.-ի կոտորածներէն խոյս տուած ու Լիբանանի մէջ երդիք գտած հայերէ(7) : Մինչդեռ, նոյնիսկ յիշեալ կոտորածներէն առաջ, Պէյրութի հայ գաղութը ներկայացուցած է աւելի մեծ թիւ մը : Պէյրութի մէջ դոյութիւն ունէին կաթողիկէ Սբ. Եղիա եկեղեցին ու առաքելական Սբ. Նշան վանքը : Կային նաեւ Զմմառու եւ Պէյթ Խաչպոյի վանքերը : Իսկ գաղութը, 1895 թ.-էն քիչ առաջ, շուրջ 30-40 առաքելական ընտանիք (200 անձ) եւ նոյնքան ու քիչ մը աւելի հայ կաթողիկէ ընտանիք կը հաշուէր : Հայերը ընդհանրապէս պետական բարձր պաշտօններ կը վարէին եւ կամ ալ ծանօթ ու յարգուած վաճառականներ էին(8) :

1895-96 թթ.ու, եւ աւելի ուշ, 1909 թ.-ի Կիլիկիոյ ջարդերը պատճառ կը հանդիսանան գաղթականութեան նոր ալիքներու : Սակայն Ի. դարու առաջին տասնամեակին, Պէյրութի զոյգ համալսարաններն են (Ֆրանսական ու Ամերիկեան) որ կը հրապուրեն արեւմտահայ ուսանողները, որոնք տասնեակներով կու գան հոս : Յատ-

էջ 274-75, ուր կը խօսուի «Հասանք»ի քիւրդի մէկում մասին, որում կազմին վրայ վերջին պահում հասած լուր մը հրատարակուած է. այդ լուրք՝ 1921 թ.-ի Փետրուար 18-ի ըմբոստութիւնն ու Սիւնն վրացեանի իշխանութեան գլուխ անցնելու լուրն է :

7) Բժ. Սբ. Խաչմասնեան, Հ. Յ. Դ. Զաւարեան Ուսանողական Միութիւնը, «Ազգայ բացառիկ»՝ Աուիբուած հայ ուսանողութեան, Պէյրութ, 1957, էջ 107 : Ա. Տէր Խաչատուրեան, ԼՄՅՏ, էջ 263 :

8) Սիսակ Յ. Վարժապետեան, Հայերը Լիբանանի Մէջ, Պէյրութ, 1951, էջ 235 :

կապէս 1908 թ.ի Սահմանադրութեան հռչակումէն յետոյ, Պէյրուս-թի դոյզ համալսարանները դիմողներուն թիւը կը մեծնայ: 1905 թ.էն սկսեալ կայ արդէն Զաւարեան Ուսանողական Միութիւնը, կազմուած Սիմոն Զաւարեանի Պէյրուս գտնուած օրերուն: Քիչ մը աւելի ուշ, կը հիմնուի նաեւ Հնչակեան Ուսանողական Միութիւնը, Պետրոս Թորոսեանի (Տոքթ. Պէննէ) կողմէ, որ 1910 թ.ին որպէս բժիշկ կը վկայուի Պէյրուսի Ամերիկեան Համալսարանէն(9):

Ըստ Բժ. Եր. Խաթանասեանի, նախքան 1908 թ.ի Սահմանադրութիւնը, հայ ուսանողներու մեծագոյն թիւը (մէկ տարուան ընթացքին) 25-ը չէ անցած, իսկ 1910 թ.էն ետք այդ թիւը կը հասնի 85-ի(10): Սակայն, Ֆրանսական ու Ամերիկեան (որ մինչեւ 1920 թ. կ'անուանուէր Սուրիական Աւետ. Գոլէճ) համալսարաններու հայ շրջանաւարտներու թիւին վրայ հիմնուելով, կարելի է ըսել թէ հայ ուսանողներու թիւը, 1900-1915 թթ.ուն, պէտք է եղած ըլլայ աւելի պատկառելի: Արդարեւ, 1900-1915 թթ.ուն, Ամերիկեան Համալսարանի հայ շրջանաւարտներուն թիւը կը հասնի շուրջ 170-ի. անոնցմէ 114-ը բժիշկ, 32-ը դեղագործ, իսկ 24-ը՝ այլ մասնագիտութիւններ: Իսկ նոյն համալսարանէն, միայն 1910-1914 թթ.ուն, ունեցած ենք 44 բժիշկ, 16 դեղագործ, 8 հիւանդապահուհի եւ այլ ասպարէզներէ 4 շրջանաւարտ. թիւով՝ 72: Գալով Ֆրանսական Համալսարանին, ուր հայ ուսանողներու թիւը եղած է նուազ, 1900-1915 թթ.ուն շրջանաւարտ հայ բժիշկներուն թիւը կը հասնի 59-ի, իսկ 1910-1915 թթ.ու միջեւ անոնց թիւն է՝ 27: Նոյն համալսարանէն մինչեւ 1910 թ. ունեցած ենք 12 դեղագործ: Տակաւին չենք հաշուեր աստուածաբանական եւ այլ ճիւղերու հետեւող հայ ուսանողները(11): Տեղին է յիշել կարգ մը անուններ այդ շրջանի ուսանողներէն, որոնք իրենց ժամանակին եւ հետագային, ազգային-հասարակական կեանքի մէջ ունեցան գործօն մասնակցութիւն. — Տոքթ. Պաղտատար Մեղքոնեան (հետագային նախագահ Պէյրուսի Ազգ. Միութեան եւ արտօնատէր՝ Փիւնիկ թերթի), Տոքթ. Վարդան Թո-

9) «Հնչակեան Մատեան», Զ. պրակ, 1955, էջ 10:

10) Բժ. Եր. Խաթանասեան, Նշուած աշխ., էջ 109:

11) Պէյրուսի գոյգ համալսարաններէն 1900-1915 թթ.ու հայ շրջանաւարտներու թիւերը պատրաստուած են՝ հիմնուելով Ս. Վարժապետեանի Հայերը Լեւրոսանի Մէջ հատարով տրուած շրջանաւարտներու ցանկերէն (էջ 458-465), ինչպէս նաեւ Վ. Վ.ի (Վալագ Վալագեան) 25-ամեակ Ամերիկեան Համալսարանի Հայ Ուսանողական Միութեան, 1908-1933 (Պէյրուս, 1933, էջ 84-89) հատարէն: Վարժապետեանի եւ Վալագեանի տուած ցանկերը մեծապէս մտնա են իրարու, չնչին սարքերու թիւմներով:

փալեան, Տոքթ. Եր. Խաթանասեան, Տոքթ. Ռուբէն Թաղւորեան, Տոքթ. Խաչատուր Պոնափարթեան, Տոքթ. Լ. Գրիգորեան, Տոքթ. Պէննէ, Տոքթ. Մ. Հայրապետեան, Տոքթ. Գ. Վարդապետեան, Տոքթ. Գ. Թապուրեան, Տոքթ. Ա. Ինճէճիկեան, Տոքթ. Միհրան Քէշիշեան, եւն. : Պէյրութի Ամերիկեան Համալսարանի ուսանողներու թիւին շուրջ աւելի ճշգրիտ թիւեր կը հայթայթէ Վալադ Վալադեան, որուն հայթայթած թիւերը կը հաստատեն մեր կարծիքը այդ ուղղութեամբ, եւ ամբողջութեամբ կը հերքեն Եր. Խաթանասեանի տուած թիւերը: Ըստ Վ. Վալադեանի, որ թիւերը քաղած է Ամերիկեան Համալսարանի Արձանադրութեանց Գրասենեակի քաթալոնկներէն, 1900–1901 տարեշրջանին հայ ուսանողութեան թիւը եղած է 51, իսկ համալսարանի ուսանողներու ընդհանուր թիւը՝ 544: Մինչեւ 1915 թ., հայ ուսանողներու թիւը միշտ աւելի բարձր եղած է: Բարձրագոյն թիւը, դարմանալիտրէն, եղած է նախքան Սահմանադրութիւնը: Արդարեւ, 1904–5 տարեշրջանին, 750 ուսանողի վրայ 86–ը եղած են հայ, յաջորդ տարին՝ 84 (769–ի վրայ), ապա՝ 82 (878–ի վրայ): Սահմանադրութենէն ետք, 1909–10–ին, հայ ուսանողներու թիւը եղած է 72 (853–ի վրայ), յաջորդ տարին՝ 65 (874–ի վրայ), տարի մը ետք՝ 63 (897–ի վրայ)(12): Ուրեմն, Խաթանասեանի տուած թիւերը կարելի չէ վաւերական նկատել:

Ա. Աշխարհամարտի սկիզբին, ցանուցիր եղան յատկապէս Կիրիկիայէն ու Արեւմտեան Հայաստանէն Պէյրութ եկած հայ ուսանողները: Անոնցմէ շատեր զոհուեցան Մեծ Եղեռնին, շատ քիչեր վերադարձան իրենց ուսումը շարունակելու:

Ուրեմն, նախքան Ա. Աշխարհամարտը, Պէյրութ հանդիսացեր էր հայ երիտասարդներու, խանդավառ ուսանողներու ժամադրավայրը: Անոնց թիւը եթէ գումարենք զաղութը բաղկացնող հայ ընակչութեան թիւին, կ'ունենանք 1000 եւ քիչ մը աւելի թիւ մը:

Ա. Տէր Խաչատուրեան կը գրէ. «... Հակառակ ուսանողական եռուն գործունէութեան... ո՛չ մէկ հետք հայ մամուլի»(13): Հակառակ այս հաստատումին, հայ ուսանողութիւնը, Ամերիկեան Համալսարանէն ներս, ունեցած է իր թերթը, 1913 թ.ին: Այսինքն՝ ժամանակակից Հայէպ հրատարակուած Ազրիւր խմորատիպ թերթին, որ կը համարուի սուրիահայ մամուլի երախայրիքը, եթէ չհաշուենք 1867 թ.ին Հայէպի մէջ հրատարակուած Ֆրաք թերթի հայտառ թրքերէն բաժինը:

12) Վ. Վ. (Վալադ Վալադեան), 25–ամեակ Ամերիկեան Համալսարանի Հայ Ուսանողական Միութեան, 1908–1933, էջ 81–83:

13) ԼՄԹՏ, էջ 284:



Հոս կ'ուզենք բանալ փակադիծ մը ու կարելի մանրամասնութիւններով խօսիլ Ֆրաք թերթի մասին, որուն շուրջ վերջերս ստեղծուած է որոշ հետաքրքրութիւն մը:

Ոմանք, Ֆրաքը կը նկատեն սուրիահայ մամուլի երախայրիքը, հիմնուելով այն իրողութեան վրայ, որ ան, արարերէնի եւ օսմաներէնի կողքին, մի քանի տարի, ունեցած է նաեւ հայատառ թրքերէն բաժին մը: Սակայն, դժուար թէ կարելի ըլլայ Ֆրաքը հաշուել հայ մամուլ, պարզապէս անոր համար, որ անոր էջերուն մէջ տեղ դրած է հայատառ թրքերէնով բաժին մը: Ո՛չ հրատարակչները եղած են հայ, ո՛չ հայկական կեանքի մասին ակնարկութիւն կայ հոն, ո՛չ ալ հայ դրականութիւն մշակուած է անոր էջերուն մէջ: Այլ՝ պարզապէս եղած է, դոնէ այն շրջանին երբ հայատառ թրքերէն բաժին մը ունեցած է, Հալէպի կուսակալութեան պաշտօնաթերթը, որուն մէջ տեղ դրած են պետական ու վարչական լուրեր, հրահանգներ ու հրամանագրեր միայն:

Հայատառ թրքերէն բաժինի մը դոյութիւնը սակայն կը մատնանշէ այն կարեւորութիւնը իշխանութիւններուն համար, որ կը ներկայացնէր այդ ժամանակաշրջանին Հալէպի կամ Հիւսիսային Սուրիոյ հայ դաղութը, որուն մէջ մեծ եղած է թիւը հայ վաճառականներու եւ արհեստաւորներու: Գաղութի այդ շրջանի թիւին մասին յստակ պատկեր մը չէ տրուած ցարդ: Մեծ Եղեռնի, ինչպէս նաեւ Կիլիկիոյ պարսպաւորին յաջորդող շրջանի դաղութի մասին տրուած են յստակ թիւեր: Միշտ ալ Հալէպն ու անոր շրջակայքը հանդիսացեր են սուրիահայ դաղութի խտութեան կեդրոնը: Նախաեղեռնեան հայ դաղութի թիւին մասին որոշ դադափար մը կը տայ Խ. Թ. Խայրալլա: Ըստ այս վերջինին, Սուրիոյ (որուն սահմաններուն մէջ կ'իյնար նաեւ Լիբանանը) հայ կաթողիկէներու թիւը 10 հազար, իսկ հայ առաքելականներուն թիւը 25 հազար էր, որոնք զըլխաւորաբար համախմբուած էին Հիւսիսային Սուրիա(14):

Ուրեմն, նկատի առած այս պատկառելի թիւը հայ դաղութին, երբեք զարմանալի պէտք չէ թուի, որ Հալէպի կուսակալութիւնը իր պաշտօնաթերթին մէկ բաժինը լոյս կ'ընծայէ հայատառ թրքերէնով: Զարմանալի թուացողը պէտք է ըլլայ այն, որ ցարդ կարելի չէ եղած դտնել որեւէ հետք հայ մամուլի, Սուրիոյ մէջ, 1913 թ.էն առաջ: Արդեօ՞ք հայերէն տպագիր տառերու գոյութիւնը այդ թուականին, մեզի իրաւունք չի տար ենթադրելու, թէ Հալէպը

14) K. T. Khairallah, La Syrie, Paris, 1912, p. 13-14.

նախքան 1918 թ-ը ունէր հայկ. տպարան, կամ ալ տպարան մը, որ հայերէն տառեր ունէր(15) :

Ֆրաքի մասին մինչև այսօր եղած կարծիքները համատեղելով, կ'ունենանք հետևեալ պատկերը :

Առաջին ակնարկութիւն մը կարելի է դնել Վ. Թ. Բիւրջճեանի յուշերուն մէջ: Բիւրջճեան՝ 1890-ական թուականներուն սկիզբը կ'այցելէ Հալէպ, տեղւոյն վրայ կամ Այնթապի մէջ հայատառ տպարան մը հիմնելու նպատակով: Վալի Հասան Հազդը փաշային մերժումին վրայ, Բիւրջճեան կը յիշեցնէ անոր «Հալէպի նահանգին երբեմնի Ֆրաքը, պաշտօնական, եւ կիսովին հայատառ»(16) :

Ա. Տէր Խաչատուրեան, իր տեղեկութիւնները քաղելով էտիպ Մրուէէն(17), կը յայտնէ, թէ Ալ Ֆուրաքը, որ 1869 թ-ին յաջորդած է Ղատիր Ալ Ֆուրաքին (1867 թ.), առաջին տարիներուն կը հրատարակուէր արաբերէն, թրքերէն եւ հայերէն: «Թերեւս, կ'ըսէ ան, նկատի ունենալով հայ դաղութի մը ներկայութիւնը Հալէպի մէջ, յարմար դատուած էր որ պաշտօնաթերթը լոյս տեսնէր հայերէնով ալ», 1869-1870 թթ.ուն(18) :

էտիպ Մրուէ, իր կարգին, շատ հաւանաբար, իր տեղեկութիւնները քաղած է Ֆիլիբ տը Թարազիի Արարական Մամուլի Պատմութիւնէն(19) :

15) Ա. Տէր Խաչատուրեանի կողմէ յիշատակուած առաջին տպարանը, որ հաւանաբար հայերէն տառեր ունեցած է՝ Անէմեան երայրներու Սէպաթ տպարանը եղած է (Տես՝ Սուրբահայ Մամուլի Պատմութիւն, «Հայկազեան Հայագիտական Հանդէս», 1972, էջ 197, 228-29) :

16) «Հայաստանի կոչմակ», 1928, թիւ 48, էջ 1518:

17) ادیب مروه ، الصحافة المرية ، بيروت ، ١٩٦١ ، ص. ٢٠٧ .

18) Ա. Տէր Խաչատուրեան, Սուրբահայ Մամուլի Պատմութիւն, էջ 206:

19) Կոմս Ֆիլիբ տը Թարազիի Արարական Մամուլի Պատմութիւնը կը բաղկանայ 4 հատորներէ. Ա. եւ Բ. հատորները տպուած են 1913 թ-ին, Գ. հատորը՝ 1914 թ-ին եւ Դ. հատորը՝ 1933 թ-ին, բոլորն ալ՝ Պէյրութի մէջ: Տը Թարազի ունեցած է աշխարհի ամենէն խոշոր հաւաքածոն արաբական մամուլի: Անոր հաւաքածոյին մէջ եղած են մասն հարիւրաւոր հայ քերթերու մտայններ եւ հաւաքածոն: 1932 թ-ի Նոյեմբերի 6-ին, «Երիտասարդ Հայունի» ամսագրի մասնաձեւումը, կոմսին Պէյրութի բնակարանին մէջ տեղի կ'ունենայ հայ մամուլի առաջին ցուցահանդէսը, որում ընթացքին կը ցուցադրուին վերջին 90 տարիներում լոյս տեսած 300-է աւելի հայ քերթերու եւ պարբերաքերթերու մտայններ (ցուցահանդէսին մասին արտայայտուած են «Ազգակ», 9 Նոյ.ի 1932, «Երիտասարդ

Արդարեւ, Ֆիլիք տը Թարազի, 1913 թ.ին Ֆրաքի մասին կու տայ հետեւեալ տեղեկութիւնները. «Պաշտօնական շաբաթաթերթ, զոր հիմնեց նշանաւոր նախարար եւ թուրք պատմարան Հալիպի վալի Ճէվիտէթ վաշան 1867 թ.ին (1284 հիճրական թուականին), եւ զայն յատկացուց՝ հրատարակելու յիշեալ նահանգի լուրերը եւ պետութեան հրամանագիրներն ու յայտարարութիւնները: Սկիզբը կը հրատարակուէր արաբերէն եւ թրքերէն զոյգ լեզուներով: Երկրորդ տարին, անոնց վրայ աւելցաւ երրորդ բաժին մը՝ հայերէն լեզուով, որ տեւեց մէկուկէս տարի: Ան այժմ կը հրատարակուի սկիզբի երկու լեզուներով, այսինքն՝ արաբերէն եւ թրքերէն...»(20):

Վերի մէջբերումէն յստակօրէն կարելի է եզրակացնել, որ Ֆրաքը սկսած է լոյս տեսնել 1867 թ.ին, իսկ տարի մը ետք՝ այսինքն 1868 թ.ին, անոր էջերուն մէջ աւելցած է հայերէն բաժին մը, որ շարունակուած է մէկուկէս տարի:

Հակառակ 1913 թ.ին արձանագրած այս տեղեկութիւններուն, մանրամասնութիւններուն, Կոմս տը Թարազի, 20 տարի աւելի ուշ, կու տայ հակասական տեղեկութիւններ: «Ղատիք Ալ Ֆուրաքը, կը գրէ ան, Հալիպ նահանգի պաշտօնաթերթն էր: Երկու տարի ապրելէ ետք, անոր յաջորդեց Ալ Ֆուրաք թերթը, որ սկիզբները կը հրատարակուէր արաբերէն, թրքերէն եւ հայերէն լեզուներով: Ապա՝ սահմանափակուեցաւ առաջին երկու լեզուներով...»(21):

Էտիպ Մրուէ, որմէ քաղած է Ա. Տէր Սաչատուրեան իր տեղեկութիւնները, օգտագործած ըլլալու է տը Թարազիի յայտնած երկրորդ կարծիքը կամ տեղեկութիւնը: Տը Թարազի, իր հայթայթած հակասական տեղեկութիւններուն մասին ոչ մէկ բացատրութիւն կու տայ:

1961 թ.ին, Ն. Գասպարեան Պատմաբանասիրական Հանդէսի մէջ, «Հայատառ-թուրքերէն թերթեր» խորագրի տակ կը գրէ.

Հայուհի», Ա. տարի, քի 3, «Լիսամ իւլ Հալ», «Էլ Ահրաք», «Էլ Պէշիք», «Էլ Միտահ» եւ ֆրամսական «Լա Սիբի» քերթերը):

20) الفيكتوت فيليب دي طرازي، تاريخ الصحافة العربية، الجزء الاول، بيروت، المطبعة الادبية، سنة ١٩١٣، ص. ٦٩.

Վիքտոր Ֆիլիպ տը Թարազի, Արաբական Մամուլի Պատմութիւն, Ա. հ., Պէշուք, 1913, էջ 69:

21) الفيكتوت فيليب دي طرازي، الجزء الرابع، بيروت، المطبعة الاميركانية، سنة ١٩٣٣، ص. ٥٣ - ٥٤.

Վիքտոր Ֆիլիք տը Թարազի, Արաբական Մամուլի Պատմութիւն, հ. 4, Պէշուք, 1933, էջ 53-54:

«Ֆրաք... Հայէպ, 1867»(22): Ն. Գասպարեան այլ տեղեկութիւններ չի հայթայթեր:

Ֆրաք թերթի մասին մանրամասն եւ հետաքրքրական տեղեկութիւններ կը հայթայթէ Գրիգոր Պողարեան, մամուլի տակ դրտնուող աշխատասիրութեան մը մէջ: Ան կը դրէ. «Հայէպի նահանգին պաշտօնաթերթը Ֆրաք (= Եփրատ) եղած է քառիջեայ շարաթաթերթ մը ներկայ օրաթերթերու ծաւալով: Առաջին թիւը լոյս տեսած է 23 Մուհարէմ 1284 հիճրական թուականին (= 27 Մայիս 1867), թրքերէն եւ արաբերէն 49 թիւ: Ունեցած է հայատառ բաժին մըն ալ սկսած 13 Սէֆէր 1285-էն (= 6 Յունիս 1868) եւ այդպէս շարունակուած է մի քանի տարի, ապա նորէն ստանալով իր նախկին ձեւը: Ֆրաքի հրատարակութիւնը դադրած է 5 Մուհարէմ 1337-ին (= 10 Հոկտ. 1918): Ատեն-ատեն ունեցած է յաւելումներ, ինչպէս են Ղատիք էլ Ֆրաքը, 1285-ին, դրական, 28 թիւ, եւ Իլալէի Ֆրաքը, 1333-ին, թրքերէն եւ արաբերէն, 47 թիւ: Ֆրաք լոյս տեսած է ընդամէնը 2420 թիւ, 53 տարուան մէջ»(23):

Ներկայացուած կարծիքները համադրելով, կ'ունենանք հետեւեալ պատկերը. Տը Թարազիի, Էտիպ Մրուէի եւ Ա. Տէր Պաշատուրեանի համար հայատառ թրքերէն բաժինի եւ հայերէն բաժինի միջեւ երբեք տարբերութիւն մը դոյութիւն չունի: Անոնց համար դոյութիւն ունի հայերէն բաժին մը: Մինչդեռ, Վ. Բիւրճեանի, Ն. Գասպարեանի եւ Գր. Պողարեանի համար յտակօրէն հայատառ բաժինի մը ներկայութիւնը առկայ է Ֆրաքի էջերուն մէջ, այսինքն՝ հայատառ թրքերէն: Իսկ ինչ կը վերաբերի հայատառ բաժնի լոյս ընծայման թուականին եւ Ֆրաք ու Ղատիք Ալ Ֆուրաք անուններու առնչութեան, Պողարեանի, եւ տը Թարազիի 1913 թ.ի տուած մանրամասնութիւնները աւելի ընդունելի են եւ ճշգրիտ, մանաւանդ Պողարեանի՝ ուր մինչեւ անգամ հայատառ թրքերէն բաժնով լոյս տեսնող առաջին թիւի թուականը յիշուած է:

22) «Պատմաբանասիրական Հանդէս», 1961, քիւ 3-4, էջ 327:

23) Գր. Պողարեան, Այնթապականք, Պէյրութ, Տպ. Ասլաս, 1974, էջ 15: Պողարեանի՝ մեզի տուած բերանացի տեղեկութիւններուն համաձայն, «Ֆրաք» քերթի մասին հազարաւոր տեղեկութիւնները իմք անձնապէս հաւաքած է՝ պտտելով Հայէպի հիմ տպարաններն ու գրադարանները, ստուգելով տարբերները եւ այլ մանրամասնութիւններ, Արտաւազ Սիւրմէեան Սրբազանի առջաջակով, որպէսզի այս վերջինիս Պատմութիւն Հայէպի Հայոց աշխատասիրութեան մէջ յիշատակուին անոնք: Արտաւազ Սրբազան, առանց սպասելու Պողարեանի պրպընտումներու արդիւնքին, հրատարակութեան յանձնած է իր աշխատասիրութիւնը:

Եթէ սկիզբը Ղատիր Ալ Ֆուրաք էր թերթին անունը, եւ լոյս տեսած՝ 2 տարի, ապա տեղը տուած է Ֆրաքի, որուն մէջ լոյս տեսած է հայատառ բաժինը, կը յանդիմնէ այն եղբակացութեան, որուն յանգած են Ա. Տէր Սաչատուրեանն ու արաբ երկու մտաւորականները, ըստ որուն Ֆրաքը, հայատառ բաժինով, լոյս տեսած է 1869 թ.ին եւ հաւանաբար շարունակուած՝ մինչեւ 1870 թ.: Մինչդեռ, հիմնուելով գոյութիւն ունեցող Ֆրաքի թիւերէն մէկուն վրայ (24), կարելի է վճռականօրէն ըսել, թէ Պողարեանի հայթաթած տեղեկութիւնները ճշգրիտ են: Ֆրաքի 79-րդ թիւին թուականն է 1868 Հոկտ. 24: Թերթը բաղկացած է չորս էջերէ (50×35 սմ.): Իւրաքանչիւր էջ ունի երեք սիւնակ, ալէն սկսած առաջին սիւնակը օսմաներէն է, երկրորդը՝ արաբերէն, երրորդը՝ հայատառ թրքերէն: Թերթին վրայ գրուած է, թէ ան լոյս կը տեսնէ շաբաթը երկու անգամ, Հայէպի Կուսակալութեան տպարանէն եւ թերթին գինն է՝ 60 փարա: Ասկէ մեկնելով, կարելի է ընել մի քանի ճշգրտմաներ: Նախ, ճիշդ է ուրեմն, որ թերթը սկիզբէն լոյս կը տեսնէր Ֆրաք անունով: Ղատիր Ալ Ֆուրաքը 1868 թ.ին, Ֆրաքի աւելցնելով լոյս տեսած է որպէս գրական յաւելուած, ինչպէս կարելի է հետեւցնել Պողարեանի տուած թուականներէն: Երկրորդ, թերթին անունը Ալ Ֆուրաք չէ, այլ՝ Ֆրաք միայն, ինչպէ՛ս կարելի է տեսնել գոյութիւն ունեցող թերթի ճակատին: Երրորդ՝ Աճէմեան եղբայրներու Մէլաթ տպարանէն առաջ, այսինքն՝ 1918 թ.էն շուրջ 50 տարի առաջ, Հայէպի մէջ գոյութիւն ունեցած է հայ տառեր ունեցող տպարան: Զորրորդ, սկիզբը կրնայ շաբաթաթերթ եղած ըլլալ, սակայն տարի մը ետք՝ եղած է եռօրեայ, կամ շաբաթը լոյս տեսած՝ երկու թիւ: Միակ մութ կէտ մը. ճիշդ որքա՞ն տեսած է հայատառ բաժինը Ֆրաքի:

**

Պէյրութի Ամերիկեան Համալսարանի մէջ հայ թերթի մը գոյութեան մասին կան երեք վկայութիւններ, անձերու կողմէ, որոնք 1910-ական թուականներուն ուսանող եղած են Պէյրութի մէջ, եւ մասնակցած են ուսանողական գործունէութեանց: Անոնք են՝ Բժ.

24) «Ֆրաք»ի յիշատակուող թիւը, որում մէջ կայ հայատառ քրքիրէն բաժին մը, եւ որում քուսակամն է 1868 թ.ի Հոկտ. 24, կը գտնուի վահէ Սէքեմնի մօտ, որում բարեհամ օգնութեամբ կարելի եղաւ քաղի վերել տրուած տեղեկութիւնները, որոնք բաւականին լոյս կը սփռեն «Ֆրաք» թերթի ստեղծած շփոթիմ վրայ:

Երուանդ Սաթանասեան, Տոբթ. Ռուբէն Թազուրեան եւ Մարկոս Քէշիշեան(25) :

Ամերիկեան Համալսարանի մէջ հրատարակուած թերթի մը մասին առաջին ակնարկութիւնը կու գայ Մարկոս Քէշիշեանի կողմէ, 1972 թ.ին: Ան կը գրէ. «1913-ին երբ ես Պէյրութ բժշկական ուսանող էի, խմորատիպ հայերէն ամսաթերթ մը կը տպէինք Ամերիկեան Գոլէճը: Այդ տարուան Հոկտ.ին ես գրութիւն մ'ունէի Պետրոս Դուրեանի մասին...»(26) :

Դժբախտաբար Մարկոս Քէշիշեան այլ մանրամասնութիւններ չի յիշեր: Այդ ուղղութեամբ կատարուած մեր հարցումներուն պատասխանելու համար, ան կը դիմէ իր բարեկամին՝ Բժ. Երուանդ Սաթանասեանի, որ եղած է խնդրոյ առարկայ թերթին խմբագիրներէն: Բժ. Սաթանասեան կը հայթայթէ բազմաթիւ հետաքրքրական մանրամասնութիւններ՝ թերթի անուան, աշխատակիցներուն, խմբագիրներուն եւ թերթի վերջնական ճակատագրին մասին: Եր. Սաթանասեան, ի մէջ այլոց, կը գրէ. «1913-ի սկիզբներին Հայ Ուսանողական Միութիւնը ձեռնարկեց մի ձեռագիր պարբերականի Միութիւն անունով:

«Պարբերաթերթը ձեռագիր էր: Բէյրութի Ամերիկեան Համալսարանի (Սիրիական Կոլէջի) զուտ հայ ուսանողների նախաձեռնութիւնն էր: Յօդուածները արտագրում էր Յարութիւն Դարբինեանը, բժշկ. ուսանող, արաբկիրցի, որի ձեռագիրը դեղադրական սքանչելիք էր: Պարբերականը foolscap ծաւալ ունէր եւ 25-ից 30 էջով: Եարունահուեց մինչեւ 1914 ուսումնական տարուայ աւարտը՝ բոլորը 6 համար: Պարբերականը Համալսարանի մատենադարանի ընթերցասրահում մնում էր կարդալու համար: Դուրս հանելը խստիւ արգելուած էր: Այդ պարբերականի հետքը չկայ(27), որովհետեւ Ա. Աշխարհամարտին, կոլէջի տնօրէնութեան հրամանով, փճացուած էին բոլոր հայերէն հրատարակութիւնները, որոնք յեղափոխական միտքեր պարունակում էին:

«Միութեան պարունակութիւնը գրական, քննադատական, ազգային եւ ընկերային հարցեր շօշափում էր...»

25) Տեղեկութիւնները, մանրամասնութիւնները գոթա կը հայթայթուիմ, քաղուած եմ վերոյիշեալ ամսերում կողմէ մեզի ուղղուած գրութիւններէ, մասնակցներէ (Ժ. Գ.) :

26) Մարկոս Քէշիշեանի մամակէմ, Յունիսի 26, 1972 Քուակիք:

27) Ամսնագլու պրպտումներ կատարեցիմք Ամերիկեան Համալսարանի «Ուսանողական Իրատարակութեան» արխիւայիմ բաժնիմ մէջ: Ոչ մէկ հետք կարելի եղաւ գտնել վերոյիշեալ թերթիմ մասիմ:

«Խմբադիրներն էին Սուրէն Աղիբեան, բանաստեղծ, Յարութիւն Դարբինեան եւ Եր. Խաթանասեան...»

«Պարբերաթերթի աշխատակիցներն էին Մեսրոպ Վարդանեանը, որ երգիծական գրութիւն ունէր ամէն Համարի մէջ, Ռուբէն Թաղտրեանը... Աւետիս Թեհլիրեանը, Թալէաթի աւարակիչ Սողոմոն Թեհլիրեանի աւագ եղբայրը, Լեւոն Գրիգորեանը... Մարկոս Քէչիշեան... Լեւոն Ղարիպեան...»

«Պարբերականը այնպիսի խանդավառութիւն եւ ոգևորութիւն ստեղծել էր, որ Փրանս. բժշկ. ուսանողներէց Յակոբ Յովհաննէսեան, Նաւասարդ Տէյիրմէնճեան եւ ուրիշներ երբեմն կ'աշխատակցէին» (28) :

Հետաքրքրական են ու բաւականին մանրամասնուած՝ բժ. Եր. Խաթանասեանի Հայթայթած տեղեկութիւնները, որոնք առաջին անգամ ըլլալով կը տրուին (29) : Տոքթ. Թաղտրեանն ալ վկայութիւն մը ունի այս մասին : «1912-ի վերջերը, կը գրէ ան, Հայ Ուսանողական Միութեան (գլխաւոր Հիմնադիրներէն եղած եմ) վարչութեան կողմէ խմբագրական մարմին ընտրուեցանք Տոքթ. Ե. Խաթանասեան, Հանդուցեալ Սուրէն Աղիբեան, եւ (Թաղտրեան) եւ մերսինցի բժշկ. ուսանող մը, որուն անունը մոռցած եմ : «Գործ» անունով ձեռագիր թերթ մը հրատարակեցինք եւ Գոյէճիի գրադարանը սեղանի վրայ դրինք : Կը յիշեմ, Սուրէնը եւ ես յօդուածներ գրած էինք. իմս՝ Անջրդի ծննդավայր գիւղիս 1895-ի թալանի մասին էր, Տերսիմի քիւրտերուն կողմէ : Քանի՞ թիւ Հանեցինք, եւն., եւն., այժմ չեմ յիշեր...» (30) :

Վ. Վալադեանն ալ կը յիշատակէ, թէ 1912 թ.ի Հոկտեմբերին Հայ Ուսանողական Միութեան վարչութիւնը «թերթի մը հրատարակութեան Համար ալ խմբագրական մարմին կ'ընտրէ» (31) : Վալադեան, թերթին մասին այլ մանրամասնութիւններ չի յիշատակեր, այդ «խմբագրական մարմին»ը ի՞նչ աշխատանքներ տարաւ. այդ մասին ոչինչ կը գրէ :

Միութիւն թէ Գործ, վերոյիշեալ երեք վկայութիւններէն

28) Մարկոս Քէչիշեանի ուզուած Ե. Խաթանասեանի գրութեան, որուն պատճէնը ունիմ տրամադրութեամբ սակ (18 Յունուարի, 1974 թ.աւակիր) :

29) Բժ. Եր. Խաթանասեան «Միութիւն» քերթի մասին ոչ մէկ յիշատակութիւն կատարած է «Ազգակ բացառիկ»ի մէջ ստորագրած իր «Հ. Յ. Դ. Զաւարեան Ուս. Միութիւնը (1904-1914)» յօդուածին մէջ (տես՝ «Ազգակ բացառիկ»՝ Առիթուն հայ ուսանողութեան, Պէյրութ, 1957, էջ 107-113) :

30) Տոքթ. Ռուբէն Թաղտրեանի մամակէն, 11 Փետրուարի, 1974 թ.աւակիր :

31) Վ. Վալադեան, Նշուած աշխ., էջ 88 :

յտակ կերպով կը պարզուի, թէ 1913 թ.ի սկիզբը Պէյրուսի Հայ Ուսանողական Միութիւնը ունեցած է իր թերթը: Հակառակ Մարկոս Գէշէշեանի վկայութեան, թէ թերթը խորատիպ էր, շատ հասանական է որ թերթը եղած ըլլայ ձեռագիր, ինչպէս կը յայտնեն խաթանասեանն ու Թաղարեանը, որովհետեւ Ամբերիկեան Համալսարանի գրադարանը դրուած օրինակը միակը ըլլալու է, այլապէս ուրիշ տեղ ալ պիտի գտնուէին օրինակներ, որոնք փրկուած պիտի ըլլային հրկիզումէն, որ կը յիշատակուի խաթանասեանի գրութեան մէջ:

Միութիւնը կամ Գործը, 1913 թ.ի սկիզբին, կը հանդիսանայ ոչ միայն լիբանանահայ մամուլի երախայրիքը, այլեւ՝ Հալէպի Ազրիւրին հետ կը բաժնէ նաեւ սուրիահայ մամուլի անդրանիկութեան պատիւը, եթէ պահ մը ընդունինք, որ Ազրիւրէն առաջ ոչ մէկ մամուլի հետք եղած է Սուրիոյ մէջ:

Մինչև ձիպէյի Հոսանքի լոյս ընծայումը, լիբանանահայ մամուլի պատմութեան մէջ հարկ է նշել զոյութիւնը այլ թերթի մը՝ Լոյս անունով: Թերթը լոյս տեսած է Ձահլէ, 1918 թ.ի ամրան սկիզբը: Ձահլէի մէջ զոյութիւնն ունեցած է, այդ թուականին, եւ Ա. Աշխարհամարտի ընթացքին, հայկական փոքր զաղութ մը, որուն վրայ աւելցած են փախստական աքորականներ եւ թրջական բանակէն փախստական զինուորներ: Թերթը եղած է խորատիպ, լոյս տեսած քանի մը թիւ, Յակոբ Մարթայեանի(32) խմբագրութեամբ: Այս թերթին մասին Ձորա Իսկէնտէրեան ունի հետեւեալ վկայութիւնը.

32) Յակոբ Մարթայեան (ծն. 1895 թ.ին) եղած է Ռապէրթ Գոլէմի փայլուն շքանաւարներէն: Թրքական բանակի սպայ, 1918 թ.ին, պաղեստինեան ցաւակաւի ֆայֆայումին, կ'ապաստանի Զահլէ, ուր լոյս կ'ընծայէ «Լոյս» խմբատիպ քերթը: Քանի մը ամիս ետք, 1918-19 կրթական տարեշրջանին, կը վարէ Պէյրուսի ազգ. վարժարանի (Սր. Նշան) տեսչութիւնը: Կ'անցնի Պոլիս, ապա՝ Սոֆիա, ուր կը գրալի ուսուցչութեամբ, լեզուագիտութեան մասնաւոր դասեր աւանդելով քուրճ, պուլկար, հայ եւ այլ ազգութեանց պատկանող ուսանողներու: Որպէս հիմուտ լեզուաբան, կը գրաւէ Մուսթաֆա Քէմալի ուշադրութիւնը եւ յատուկ կարգադրութեամբ կ'անցնի Պոլիս, կը մասնակցի քրքագիտական համագումարներու եւ կը վարէ բարձր պաշտօններ՝ լեզուագիտութեան համարով: Մանօք է Յակոբ Տիլաչար անունով: Այժմ կ'ապրի Ամսթրա: (Յակոբ Մարթայեանի մասին տես՝ Թորոս Ազատեան եւ Մարտիրոս Գոշունեան, Արմազան Թուրքիոյ Հանրապետութեան 15-ամեակին Ատիթով, Իսթանպուլ, 1938, էջ 18, ինչպէս նաեւ Y. Çark, Turk Devleti Hizmetinde Ermeniler 1453-1953, Istanbul, Yeni Matbaa, 1953, sah. 275-276).

«Փրոֆէսէօր Յակոբ Մարթայեան «Լոյս» անունով երկու էջ-նոց խմորատիպ թերթիկ մը հրատարակելու դաղափարը յղացաւ եւ սկսաւ թերթի հրատարակման աշխատանքներուն: Եւ որովհետեւ մեր տունը կը մնար, անոր կ'օգնէինք ես եւ մեր տան մէջ ապաստանած հիւանդապահուհի Օր. Ուլաննա Թիւրպայեան»(33):

Լոյսի մասին այլ մանրամասնութիւններ կարելի չեղաւ դանել:

ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԷՋ ՅԱՐԴ ԶԵՒՇԱՏԱԿՈՒԱԾ ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ ԹԵՐԹԵՐ

Ստորեւ տրուած 35 թերթերը ցարդ ոչ մէկ յիշատակութեան արժանացած են մատենագիտական աշխատասիրութիւններու մէջ: Ուրեմն՝ առաջին անգամ ըլլալով անոնք կը յիշատակուին: Մեկնելով այս իրողութենէն, կը տրուին զանազան մանրամասնութիւններ, մասնաւորաբար՝ յիշատակուած թերթերուն չափերը: Յանկը կարելի էր տալ այբբենական շարքով, սակայն նախընտրեցինք պահել ժամանակադրական շարքը: Այն պարագային, երբ յիշատակուած թերթը կարելի չէ եղած անձամբ տեսնել, յիշատակուած են աղբիւրները:

ՄԻՈՒԹԻՒՆ (Պարբերաթերթ Հայ Ուսանողական Միութեան): Պէյրութ, 1913 թ.ի սկիզբներէն 1914 թ.: 6 թիւ լոյս ընծայուած: Խմբագիրներ՝ Սուրէն Աղիբեան, Յարութիւն Դարբինեան, Եր. Խաթանասեան եւ Ռ. Թաղորեան: Լիբանանահայ մամուլի երախայրէքը:

ԼՈՅՍ: Խմորատիպ: Զահլէ, 1918 թ.: 2 էջ: Խմբագիր՝ Յակոբ Մարթայեան (Տիւրչար):

ԶԱՆԳ - ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ (Ամսաթերթ Ամերիկեան Համալսարանի Ուս. Միութեան): Խմորատիպ: Պէյրութ, 1926 թ.ի Յունուար(34):

ՆՈՐ ԲԱՍՏԻՅԼ: Զեռագիր: Կատմոս բերդ (Սուրիա), 1927 թ.ի Օգոստոսին: Արաբերէն եւ հայերէն բովանդակութեամբ: Յօդուածներ ստորագրած են՝ հնչակեան գործիչ Սարգիս Տիւրունի, Յ. Մատէեան եւ Հայկազուն Պօյաճեան՝ ծածկանուններով: Մէկ թիւ(35):

33) Զորա Իսկէմտէրեան, Յուշեր Պատմութեան Համար, Պէյրութ, 1974, էջ 87:

34) Այս քերթը յիշատակուած է «Որբաշարիի Աստղը» ամսաքերթի «Ստացման» բաժնի մէջ (տես՝ Որբաշարի Աստղը, 1926 Յունուար, քիւ 11):

35) Յ. Մատէեան, Լիբանանի եւ Սուրիոյ Մէջ Լոյս Տեսած Մեր Մամուլի

ՎԻՂԱԿ (Կրօնական պարբերաթերթ) : Խմբրատիպ : Պէյրութ, 1929 : Հրատարակութիւն Հայ Աւետարանական Ջանից Ընկերակցութեանց Տեղական Միութեան : Խմբադիրներ՝ Տոքթ. Բիւզանդ Հատիտեան, Ժորժ Կայծակեան, Երուանդ Լուսարարեան, Յովհաննէս Սերոբեան : 2 թիւ, երկրորդ թիւը լոյս տեսած՝ Յունիսի 1-ին : 20 էջ (27×18 սմ.) :

Վիլակը կարելի է նկատել լիբանանահայ առաջին աւետարանական թերթը :

ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ ՊԱՏԿԵՐԱԶԱՏՐԴ ՕՐԱՑՈՅՑ, 1936 : (Ի նպաստ Նոր Ատանայի Արդարեան երկսեռ վարժարանի) : Պէյրութ, 1935 թ., Տպ. Արատ : Պատրաստեց՝ Եղիա Տօլպաղեան : 153 թերթ (26×19 սմ.) : Առաջին 8 թերթերը էջադրուած են, ապա էջադրուած՝ դադարած : Բովանդակութիւնը եւ ծաւալը մեզի իրաւունք կու տան տարեյոյցերու կամ տարեգիրքերու մէջ դետեղելու դայն : Սկիզբը՝ պատմական ու ընդհանուր ընդարձակ տեղեկութիւններ կան Լիբանանի մասին : Նմանապէս՝ լիբանանահայ անձնաւորութիւններու եւ յարձր կղերին մասին :

L'ARC (Bulletin de liaison des membres du group St. Gregoire) : Սկսուտական թերթ Սբ. Գրիգոր Լուսաւորիչ ձեմարանի : Մեքենայի բազմադրուած : Պէյրութ, 1937 թ.ի Յունուարէն - 1939 թ. : Ա. տարին լոյս տեսած՝ 4 թիւ (23×17 սմ.) : Բ. եւ Գ. տարիներուն՝ 3-ական թիւ, աւելի մեծ ծաւալով (32×23 սմ.) : Գ. տարուան 3-րդ թիւը բացառիկ մըն է՝ նուիրուած սկսուտներուն Պաղեստին կատարած արշաւին : Էջերու թիւը կը տարուբերի 20-48-ի միջեւ : Յօդուածները ընդհանրապէս ֆրանսերէն են, երբեմն՝ հայերէն :

ԲՈՂԲՈՁՈՒՄ (Տետր) : Հայ ձեմարանի Գ. դասարանի հայ. գրուածքներու հաւաքածոյ (այսպէս արձանագրուած է առաջին թերթին վրայ) : Պէյրութ, 1942 թ.ի Նոյեմբեր : Ձեռագիր : Հաւանարար իւրաքանչիւր գրող անձնապէս ինք գրած է շարադրութիւնը կամ ուսումնասիրութիւնը, քանի որ իւրաքանչիւր յօդուած տարբեր ձեռագրով գրուած է : (34×25 սմ.) :

ՋԱՀԱԿԻՐ (Լսարանական ամսաթերթ) : Խմբրատիպ : Պէյրութ, Հայ ձեմարան, 1945 թ.էն - 1948 թ.ի Փետրուարը : Ընդամէնը 20 թիւ (25×18 սմ.) : Առաջին երկու տարիները խմբագրած է Աբրահամ Ալիքեանը : (Չչփոթել նոյն վարժարանին Ջահակիթին հետ, որուն Ա. տարին սկսած է 1951 թ.ին) :

ՓԱՐՈՍ (Գրական, երգիծական, սկսողական պարբերաթերթ) :
 Հրատարակութիւն Մեսրոպեան Նախկին Սանուց Միութեան դրա-
 սէրներու խումբին : Խմբարտիպ : Պուրճ-Համուտ, 1946 թ.ի Յուն-
 ուարէն - Մայիս : Լոյս տեսած՝ 5 թիւ, թիւ 4-5-ը միացեալ (30×22
 սմ.) :

Հ. Կ. Ե. Մ.ի օրուան նուիրուած արլում : Պէյրութ, Ա. տա-
 րի, 1947 թ. : Հրատարակութիւն Հայ Կաթողիկէ Երիտասարդաց
 Միութեան (Հ. Կ. Ե. Մ.) : 40 էջ (17×25 սմ.) :

ԱՌԱՒՕՏ (Ազգային քաղաքական անկախ օրաթերթ) : Պէյ-
 րութ, 1948 թ.ի Մարտի 7-էն - Նոյեմբեր : Տէր եւ Տնօրէն՝ Յարու-
 թիւն Ճէրէճեան (Յ. Կուժունի) : Խմբադրական աշխատանքներ կա-
 տարած են Յ. Ճէրէճեան, Սեդրակ Ասպճեան եւ վերջին շրջանին՝
 Պետրոս Մինասեան : Լոյս տեսած է երբեմն չորս, երբեմն երկու է-
 ջերով (60×45 սմ.) :

Ծանօթ է Հրանդ Տէվէճեանի Առաւօտը (1938-1946) : Տէ-
 վէճեանի հայրենիք դադթով դադրած էր Առաւօտը : Արտօնադիրը
 տէր փոխած էր : 1948 թ.ի սկիզբը, երբ իշխանութիւններուն կող-
 մէ կը դադրեցուի Ժողովուրդի Ձայն օրաթերթը, «Ազգային քաղա-
 քական անկախ օրաթերթ» անուան տակ լոյս կ'ընծայուի Առաւօտը,
 որուն առաջին թիւին մէջ Յ. Ճէրէճեան կը գրէ .

«Հայ ընթերցող հասարակութիւնը ծանօթ է «Առաւօտ» օրա-
 թերթի մը, որ տասնամեակ մը կանոնաւորապէս հրատարակուեցաւ
 քաղաքիս մէջ՝ իր արժանաւոր տնօրէն հայրենադարձ Պ. Հրանդ Տէ-
 վէճեանի կողմէ եւ որ դադրեցաւ լոյս տեսնելէ՝ անոր մեկնումէն
 ի վեր :

«Նոր «Առաւօտ»ը իր նախորդէն կը ժառանգէ անունը, եւ իր
 այս առաջին թիւով համեստօրէն կը ներկայանայ իր ընթերցողնե-
 րուն՝ յետ այսու ամէն առաւօտ անթերի կերպով միշտ ներկայ ըլ-
 լալու խոստումով :

«Սուրիոյ եւ Լիբանանի հայութիւնը տասը տարուայ ընթաց-
 քին առիթը ունեցաւ զնահատելու նախկին «Առաւօտ»ը, զնահատու-
 թիւն մը որ ամբողջութեամբ կը պատկանի անոր :

«Նոր «Առաւօտ»ը նոր էջ մը կը բանայ : Իր Ա. թիւէն սկսեալ
 կը ստանձնէ իր սիւնակներուն բոլոր պատասխանատուութիւնը...»

«Ամէն թիւրիմացութեան եւ սովորութիւն դարձած ճրի վե-
 րադրումներու առաջին առնելու համար, պարտինք մի անգամ ընդ-
 միշտ այս առթիւ յայտարարել, ոեւէ կուսակցութեան օրկանը չէ» (36) :

Հակառակ տրուած բացատրութիւններուն, նոր Առաւօտը դժուարութիւններու կը բախի լիբանանեան իշխանութիւններուն կողմէ, որոնք կը դադրեցնեն թերթը, առաջին անգամ՝ Յունիսի 10-էն Հոկտեմբերի 20-ը, եւ վերջնականապէս՝ Նոյեմբերին, չուրջ 75 թիւ լոյս տեսնելէ ետք: Աշխատակիցներ՝ Ա. Կիտուր, Լեւոն Չորմիսեան, Յրթ. Ճէրէճեան, Պետրոս Մինասեան (Ահրիման), Ս. Ապաճեան, եւն.:

ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՊԱՅՔԱՐ (բաղաբական): Մեքենադէր բաղձագրուած: Պէյրութ, 1948 թ.ի վերջերը - 1949 թ.ի սկիզբները: Անունը առած է Լիբանանի համայնավար կուսակցութեան օրկան արարատառ Նիտալի էլ-Շաալի թերթէն: Խմբագիրներ՝ Յ. Մատէեան եւ Յովհ. Աղպաշեան: 8-10 էջ:

ՀնՁԱԿԵԱՆ ՄՍՏԵԱՆ: Հրատարակութիւն Ս. Դ. Հնչ. Կուսակցութեան Լիբանանի շրջանի Պրօպականտի ղեկանի: Պէյրութ, 1952 թ.ի Յունուարէն - 1955 թ.ի Յունիս: Լոյս տեսած՝ 6 պրակ: Առաջին երեք պրակները լոյս տեսած են 1952 թ.ի Յունուար, Փետրուար եւ Մարտ ամիսներուն, յաջորդաբար: Դ. պրակը՝ 1954 թ.ի Յունուարին, Ե. պրակը՝ 1954 թ.ի Ապրիլին, Չ. պրակը՝ 1955 թ.ի Յունիսին: Ա., Դ. եւ Չ. պրակները խմբադրած է Միհրան Սէֆէրեան, Բ. եւ Գ. պրակները՝ Արմէն Ղարիպ, Ե. պրակը՝ Արսէն Կիտուր: Մինչեւ 5-րդ պրակ էջադրութիւնը շարունակական բնոյթ կը կրէ եւ հասած է 148-րդ էջին: Վերջին պրակը կը բաղկանայ 16 էջէ (24×17 սմ.) (37):

ՀնՁԱԿԵԱՆ ՊԱՐԲԵՐԱԳԻՐՔ: Հրատարակութիւն՝ Մշակութային Մարմնի: Պէյրութ, 1952: 48 էջ (22.5×15 սմ.): Աշխատակիցներ՝ Ա. Կիտուր, Ժիրայր Նայիրի, Հրանդ Գանդրունի, Պօղոս Թիւթիւնճեան, եւն.:

Թէեւ կողքին վրայ հրատարակութեան վայր նշուած է Հալէպ, սակայն պարբերադիրքը տպուած է Պէյրութ, տպ. Նաժահ: Ասոր պատճառը՝ առանց արտօնութեան տպուելն է:

ՎԵՐՆԷՔ (Պարբերաթերթ Հ. Ե. Ը.ի Կրտսերաց Բաժինի): Մեքենադէր բաղձագրուած: Պէյրութ, Ա. տարի, թիւ 1, 1952 թ.ի Դեկտեմբերի 28: 19 էջ (33×21 սմ.): Մէկ թիւ:

ՓԵԹԱԿ (ձեմարանի Դեղին դասարանի թերթը, աւելի ուշ՝ Ն. Փ. ձեմարանի Հ. Օ. Մ. Մանկապարտէզի տարեթերթը): Պէյրութ, 1953 թ.էն սկսեալ: Բաղմատպուած ձեռագիր: Թերթին չա-

37) Հնչական Մատեանի առաջին 4 պրակները յիշատակած է Մ. Սէֆէրեան (Հնչակեան Մատեան, Դ. պրակ, 1954, էջ 98):

փերը եւ էջերուն թիւը միշտ փոփոխութիւն կրած են: Բովանդակութիւնը կը ներկայացնէ մանկապարտէզի աշակերտներուն աշխատանքները:

ԱՍՊԵՏ (Շարաթաթերթ Հ. Բ. Ը. Մ.ի Յովակիմեան-Մանուկեան Երկրդ. Վարժարանի երկրորդական Ա. դասարանի): Պէյրուս, 1957: Առաջին 2 թիւերը՝ ձեռագիր, ապա՝ բաղմադրուած (38):

CLARION (Տարեգիրք Հայկազեան Գոլէճի): Պէյրուս, 1957-58 տարեշրջանէն սկսեալ մինչեւ 1963 թ.: 4 դիրք (առաջինը՝ 30×17 սմ., միւսները՝ 24×17 սմ.): Լոյս չէ տեսած 1960-61 տարեշրջանին: Եղած է անդլերէն լեզուով հրատարակութիւն: Միայն 1958-59 տարեշրջանի տարեգիրքը ունեցած է 36 էջոց հայերէն բաժին մը հայ ուսանողներու գրական փորձերուն եւ ուսումնասիրութիւններուն յատկացուած: Խմբագիր՝ Երուանդ Քասունի:

ՇՈՂԱՐՁԱԿ (Խաղաղութեան երգիծախառն պարբերագիրք): Պէյրուս, 1959 թ., թիւ առաջին: 40 էջ (22.5×15 սմ.): Խմբագիր՝ Նաչիա Նշտունի Փէշլիմեան: Լոյս տեսած՝ մէկ թիւ:

ՏԱՄՆԱՄԵԱԿ (Տարեգիրք): Հրատ. Վահան Թէքէեան Վարժարանի: Պէյրուս, 1961: 66 էջ (17×24.5 սմ.): Նոյն վարժարանը հրատարակած է նաեւ 15-ամեակի տարեգիրք մը, 1966 թ.ին, 56 էջ (14×24 սմ.) եւ 20-ամեակի տարեգիրք մը, 1972 թ.ին, 104 էջ (28.5×20 սմ.):

ՏԵՂԵԿԱՏՈՒ Հ. Կ. Ե. Մ.ի (Հայ Կաթողիկէ Երիտասարդաց Միութիւն): Մեքենագիր բաղմադրուած: Պէյրուս, 1963 թ.ի Նոյեմբեր-1965 թ.ի Յունիս: Բ. եւ Գ. թիւերը լոյս տեսած են 1964 թ.ի Յունիսին եւ Նոյեմբերին: Առաջին երկու թիւերը մեծադիր են (33×21 սմ.), միւս երկուքը՝ աւելի փոքր (29×21 սմ.):

ՆՈՐ ԳԵՂԻ (Աղլաղրական հանդէս): Հրատ. Համազդեցիական Վերաշինաց Միութեան կեդրոնական գործադիր մարմնոյ: Պէյրուս, 1964-65 թթ.: Երկու դիրք, Ա. տարի (1964) եւ Բ. տարի (1965): Ա. տարին՝ 167 էջ, Բ. տարին՝ 207 էջ (33×24 սմ.):

ՏԱՐԵԳԻՐՔ ՀԱՅԿԱԶԵԱՆ ԳՈՂԷՃԻ (Հաստատութեան Հիմնադրութեան տասնամեակին առիթով, 1955-1965): Պէյրուս, 1965 թ.: Անդլերէն, հայերէն եւ արաբերէն բովանդակութեամբ: 150 էջ (24×17 սմ.): Խմբագիրներ՝ Յակոբ Թերճիմանեան եւ Յակոբ Կէօլճէյիզեան:

38) Ասպետի մասին տեղեկութիւն կը հայքայքէ Յոյն վարժարանի պաշտօնաբերքը՝ «Նուիրում» (Ե. տարի, 1957, թիւ 2, էջ 57-58):

ՅԱՌԱՋ Շարաթաթերթ (Գրական-Հասարակական): Պէյրութ, 1965 թ.ի Հոկտ.ի 10 - 1970 թ.ի Յունուարի 31: 8 էջ (41×28.5): Արտոնատէր՝ Նախլէ Մութրան, պատասխանատու տնօրէն՝ Գասպար Տէրտէրեան, խմբագիր՝ Յովհ. Աղպաշեան: Ունեցած է խմբագրական կազմ: (Այս թերթին մասին տես աւելի հոգ տրուած լուսաբանութիւնը):

ՂԱՐԱՐԱՂ: Պէյրութ, 1966 թ.ի Նոյեմբերի 24: 4 մեծադիր էջ (50×35 սմ.): «Վահան Սէմէրճիպաշեանի եւ Կ. Չ.ի պահանջքին վրայ դրեց՝ Յարութիւն Սահակեան»:

Ղարաբաղի ու անոր պատմութեան նուիրուած լրագրի ծաւալով հրատարակութիւն մը, նկարազարդ ու քարտէսով:

ԱՐԵՆՈՅՇ (Պարբերաթերթ Հ. Ե. Ը.ի Արեւուչներու): Պէյրութ, 1967: 36 էջ (24×17 սմ.): Լոյս տեսած՝ մէկ թիւ:

ԽԱԶԲՈՒՌ (Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան Աղգային Գոլէճի Հայկական եւ Անգլիական ակումբներու գրական ձեռնարկ): Մեզենագիր բազմադրուած: Պուրճ-Համուտ, 1967 թ.ի Յունիս, թիւ 1: Հայերէն եւ անգլերէն բովանդակութեամբ: 44 էջ (27.5×21 սմ.):

السبايل - ՍԱՆԱՊԵԼ (Պարբերաթերթ Լ. եւ Ս. Յակոբեան Աղգային Վարժարանի Արաբական Ակումբի): Մեզենագիր բազմադրուած: Արաբերէնով: Պուրճ-Համուտ, 1967 թ.ի Դեկտեմբերին: Մէկ թիւ, 40 էջ (28.5×21 սմ.):

SOPHIA (Լ. եւ Ս. Յակոբեան Աղգային Գոլէճի Անգլիական Ակումբի հրատարակութիւն): Մեզենագիր բազմադրուած: Պուրճ-Համուտ, 1968 թ.ի Մայիսին: Լոյս տեսած մէկ թիւ, 61 էջ (32×21 սմ.):

ԼՐԱՏՈՒ Հայ Աւետարանչական Ընկերակցութեան 50-ամեայ արշաւի Յանձնախումբի: Պէյրութ, 1968 թ., թիւ 1: Էջաթիւ չէ դրուած, սակայն կը բաղկանայ 12 էջերէ (28×22): Մէկ թիւ լոյս տեսած, ապա՝ դադրած:

ՓՇԱՊՍՍԿ (Երգիծաթերթ Հ. Ե. Ընկերակցութեան Ասպետներու): Պէյրութ, 1968 թ.ի Դեկտեմբեր: Մէկ թիւ, որպէս «Խօսնակ»ի յանդիման: 12 էջ (45×30 սմ.): Խմբագիրներ՝ Վարդգէս Պալեան, Ենիոյզ Պալիկեան, Տ. Գէորգ Քեչիշեան, Գր. Քէօսեան, Պերճ Ֆաղլեան:

ՆՈՐ ՈՒՂԻ (Ի խնդիր Աղգային Դեմոկրատիայի): Մեզենագիր բազմադրուած: Պէյրութ, 1969 Յունիս, թիւ 1: 19 էջ (27×21 սմ.): Լոյս տեսած՝ մէկ թիւ:

Թերթին վրայ ոչ մէկ անուն ու հասցէ, սակայն խմբագրուած է Գասպար Տէրտէրեանի կողմէ:

ՎԵՐԵԼՔ (Կրօնական տարեգիրք, Հայ զրիստոնեայ ընտանիքին տարեգիրք, Հայ ընտանիքին տարեգիրք. այս երեք բացատրութիւններն ալ գործածուած են ցարդ լոյս տեսած թիւերուն մէջ) : Հրատարակութիւն՝ Մխիթարեան Վարժարանի : Պէյրութ, 1970 թ.էն սկսեալ (24×17 սմ.) : Խմբագիր՝ Հ. Բարսեղ Վ. Ֆէրհաթեան :

Առաջին թիւին մէջ կ'ըսուի. «Վերելքը տարեգիրք մըն է, որ տարին երկիցս լոյս պիտի տեսնէ. Յունուարին-Յունիսին» :

1970 եւ 1971 թուականներուն կը յարդուի խոստումը : 1972 եւ 1973 թթ.ուն, փոխան երկուքի : տարին մէկ թիւ լոյս կը տեսնէ :

Այս Վերելքը չչփոթել նոյն հաստատութեան ուսանողական պարբերագիրքին հետ, որ կը կրէ նոյն անունը եւ լոյս կը տեսնէ անջատարար, սկսած 1961 թ.ի Մայիսէն : Այս վերջինս, մինչեւ 1967 թ.ի Մայիս ամիսը լոյս կը տեսնէ՝ 13 թիւ : 1968 թ.էն սկսեալ՝ տարին թիւ մը : 1972 թ.ին լոյս չէ տեսած : 1973 թ.ին լոյս տեսած՝ թիւ 18-ը :

ՊԱՐԲԵՐԱԳԻՐՔ (Հայ Աւետ. Վարժարաններու Ուսուցչական Միութեան, 1969-1970) : Պէյրութ, տպագրութիւնը աւարտած 1971 թ.ին : 124 էջ (27×21 սմ.) : Խմբագիր՝ Բարեկէն Զանոյեան :

ՃԵՂՈՒՄՆԵՐ, ՍՐԲԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՅԱՒԵԼՈՒՄՆԵՐ

Այս բաժինին մէջ տրուած թերթերը նախապէս յիշատակութեան արժանացած են մատենագիտական աշխատասիրութիւններու եւ այդ ուղղութեամբ պատրաստուած ցանկերու մէջ : Մանրակրկիտ քննութենէ մը վերջ, մեր կողմէ կատարուած են սրբագրութիւններ եւ յաւելումներ :

Որոշ բաժանումի ենթարկած ենք այս բաժինին մէջ ինկող թերթերը : Այդ բաժանումներն են՝ Ա. Քաղաքական թերթեր, Բ. Գրական թերթեր, Գ. Դպրոցական թերթեր, Դ. Այլադան թերթեր : Կրկին պիտի հետեւինք ժամանակագրական կարգին :

Ա. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԹԵՐԹԵՐ

Փիւնիկ եւ Նաբ Փիւնիկ

Փիւնիկ : Պէյրութ, 1924 թ.ի Մարտի 19 - 1925 թ.ի Մայիս 10 : Պատասխանատու տնօրէն՝ Մկրտիչ Պօղոսեան : Խմբագիրներ՝ Ա. Արշակունի (Արշակ Յովհաննիսեան) եւ Խոսրով Թիւթիւնճեան :

Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը Փիւնիկով հիմը կը դնէր ե՛ւ լիբանանահայ կուսակցական-քաղաքական մամուլին ե՛ւ առաջին տպագիր թերթին : Խմբագրական աշխատանքները վարելու

Համար կը հրաւիրուին կուսակցական գործիչներ՝ Արշակ Յովհաննիսեանն ու Խոսրով Թիւթիւնճեանը, որոնք 1921 թ.ի Հայաստանի փետրուարեան դէպքերէն ետք անցած էին Պարսկաստան:

Փիւնիկի առաջին թիւը լոյս կը տեսնէ 1924 թ.ի Մարտի 19-ին, Զորեքշարթի օր մը, հակառակ որ թերթի ճակատին գրուած է՝ «Կը հրատարակուի Հինդչարթի եւ Կիրակի օրերը»: Առաջին թիւի խմբագրականին մէջ կ'ըսուի. «Դժնդակ պայմաններու մէջ է, որ լոյս կը տեսնէ «Փիւնիկ»ը»(39):

Փիւնիկի Համար նիւթականը՝ առաջին օրէն իսկ կը հանդիսանայ դժուարութիւններուն մեծագոյնը: Կարճ ժամանակ ետք, «թերթի տնտեսական տաղնապը մեղմացնելու նախանձախնդրութեամբ, ընկ. Թիւթիւնճեան մինակը ստանձնեց թերթը խմբագրելու պարտականութիւնը»(40):

Փիւնիկ լոյս կը տեսնէ 117 թիւ, մինչեւ 1925 թ.ի Մայիսի 10: Ապա՝ թերթը կը վերամկրտուի՝ նոր Փիւնիկ, 1925 թ.ի Մայիսի 13-ին եւ այդ անունով լոյս կը տեսնէ 118-րդ թիւը: Ըստ Ա. Տէր Սաչատուրեանի, «Այս վերամկրտման հարցը կը մնայ լուծելի»(41):

Անուանափոխութեան մասին յտակացումներ կը կատարէ եւ լուսարանութիւններ կու տայ նոր Փիւնիկը ինք, առաջին խմբագրականով:

«Այսօրուրնէ սկսեալ մեր թերթը լոյս կը տեսնէ «Նոր փիւնիկ» անունով:

««Փիւնիկ»ը առջի օր, մամուլի տեսչութեան կողմէ եկած հրահանգի վրայ, դադրեցուց իր հրատարակութիւնը: Այսպէս էր ցանկացեր «Փիւնիկ»ի ինքնակոչ արտօնատէր Պ. Բժիշկ Մելքոնեան, հիմնուած օրէնքով ապահոված իրաւունքին վրայ:

«... Անօգուտ անցաւ նաեւ սպառնալիքը, որով Սուրբոյ Հայութեան ինքնակոչ ներկայացուցիչը կը մտածէր խափանել Հանրութեան ձայնը յանձին «Փիւնիկ»ի:

«Այլեւս լոյս չ'տեսներ «Փիւնիկ»ը, բայց անոր փոխարէն մենք կը հրատարակենք «Նոր ֓իւնիկ»ը, որ հարազատ շարունակութիւնն է «Փիւնիկ»ին, նոյն ուղղութեամբ խմբագրական եւ վարչական նոյն կազմով:

«Նոր ֓իւնիկ»ը, ինչպէս իր նախորդը, օրկանն է Հայ մեծ

39) «Փիւնիկ», Ա. տարի, 1924, Մարտ 19, Իւր 1:

40) Նագարէք Կերկերեան, «Ազգակ»ի Ծնունդը Մեր Գաղութին Մէջ, «Ազգակ»ի 38 Տարիները, 1927-1965, էջ 63:

41) ԼՄՅՏ, էջ 265:

քաղաքական կազմակերպութեան՝ Հ. Յ. Դաշնակցութեան, որմէ կ'ստանայ ան իր բովանդակ ուժը» (42) :

Ուրեմն, յստակ է անուանափոխութեան տուն տուող պատճառը: Տոքթ. Պաղտասար Մելքոնեան (կաթողիկէ Հայ մը), որ ատենապետն էր Լիբանանի Ազգային Միութեան, յաջս Ֆրանսական իշխանութիւններուն, որոնց ենթակայ էին Սուրիան ու Լիբանանը, արտօնատէրն էր Փիւնիկիին: Տարակարծութիւն եւ թշնամանք Տոքթ. Մելքոնեանի եւ Հ. Յ. Դաշնակցութեան միջեւ, պատճառ կը հանդիսանան Փիւնիկի դադարեցման, արտօնատէրին՝ Ֆրանսական իշխանութեանց մօտ կատարած դիմումին վրայ: Սակայն, Փիւնիկի խմբադիրը՝ Խոսրով Թիւթիւնճեան, առանց ժամավաճառ ըլլալու, նոր դիմումնադրով մը կը ստանայ նոր Փիւնիկի արտօնադիրը: Ուստի, թերթը, առանց ընդմիջումի, կը շարունակէ լոյս տեսնել նոր անունով - նոր Փիւնիկի (43): Արտօնատէրն ու խմբադիրն է՝ Խոսրով Թիւթիւնճեան, իսկ պատասխանատու տնօրէնը՝ Մկրտիչ Պօղոսեան:

Մինչ նոր Փիւնիկի կը շարունակէ լոյս տեսնել մինչեւ 1927 թ. ի փետրուարը, 1925 թ. ի Մայիսէն ասդին Փիւնիկի արտօնադրով ոչ մէկ թերթ լոյս կը տեսնէ:

Շաբաթ, 27 Մարտ 1926 թ. ին, եռօրեայ նոր Փիւնիկի (Փիւնիկն ալ շաբաթը երկու անգամ լոյս կը տեսնէր), իր 208-րդ թիւէն (Գ. տարի, թիւ 91) կը դառնայ երկօրեայ եւ կը սկսի լոյս տեսնել Երեւելաթի, Հինգշաբթի ու Շաբաթ օրերը: Այս առթիւ, երկօրեայ նոր Փիւնիկի առաջին խմբագրականին մէջ կը գրուի.

«Հասարակական լուրջ պահանջի մըն է որ ընդառաջ կ'երթանք, երկօրեայի վերածելով թերթը: Երկու տարին լրացաւ ամսիս 19-ին, երբ «Փիւնիկ» ի առաջին թիւը լոյս տեսաւ, եւ անկէ ի վեր կը շարունակուի՝ օրինակելի կանոնաւորութեամբ մը: Վաղուց կ'զգացուէր անհրաժեշտութիւնը դարձնելու թերթին՝ երեւումը աւելի յաճախադէպ, հնարաւորութիւն ընձեռելու ընթերցող Հանրութեան՝ հետեւիլ ուշի ուշով դէպքերուն, որոնք տեղի կ'ունենան մեր մասնաւոր շրջափակէն դուրս եւ սակայն կը հետաքրքրեն մեզ՝ խորապէս, ունենան անոնք ազգային, քաղաքական թէ տնտեսական բնոյթ: Առժամապէս մենք կը փորձենք բաւարարել այս արդարացի պահանջը երկօրեայ Հրատարակութեամբ, յոյս տածելով որ յառա-

42) «Նոր Փիւնիկ», Բ. տարի, 1925, 13 Մայիս, Բիւ 1 (118):

43) Խմբագիր Խ. Թիւթիւնճեան անձնագէտ, բերանացի, հաստատած է այս իրողութիւնները:

Վրկային հնարաւորութիւն կ'ստեղծուի տեսնել «Նոր փիւնիկ»ը ամենօրեայ» (44) :

Հակառակ վերջին տողերուն մէջ արտայայտուած փափաքին, նիւթական դժուարութիւններու պատճառով, երկօրեայ Նար փիւնիկը կը դադրի հրատարակուելէ 1927 թ.ի փետրուարի սկիզբը : Հաղիւ ամիս մը ետք, 1927 թ.ի Մարտի 5-ին, Հայկ Պալեան, կուսակցութեան հետ համախորհուրդ, գնելով Նար փիւնիկի տառերը, անձնական միջոցներով կը սկսի Ագրակի հրատարակութեան :

ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԶԱՅՆ (Շարաթաթերթ), 1938 թ.ի փետրուարի 6 - 1939 թ.ի Հոկտ.ի 1 :

ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԶԱՅՆ (Օրաթերթ), 1942 թ.ի փետրուարի 20 - 1948 թ.ի Յունուարի 11-ը :

Մինչեւ 1938 թ.ի փետրուար ամիսը Լիբանանի և Սուրիոյ Հայ համայնավարները ունեցած են ոչ մէկ տպագիր թերթ : Մինչեւ այդ թուականը, եւ աւելի ուշ թուականներու, զանազան ընդլայնակեայ դադարնի թերթեր լոյս ընծայած են անոնք, ընդհանրապէս խմորատիպ կամ մեքենայի բաղմագրուած, որոնց կեանքը եղած է շատ կարճ (45) :

Այդ թերթերը եղած են՝

ՆՈՐ ՓԱՐՈՍ : Խմորատիպ : Պէյրութ, 1925 : 24 էջ : Ա. Թիւը լոյս տեսած է 1925 թ.ի Յունիսին, իսկ Բ. Թիւը՝ Օգոստոսին : Խմորատիպ : Յ. Մատէեան : Ապա՝ Մատէեան եւ ուրիշներ աքսորուած են դէպի Տէր-Չօրի կողմերը, Ֆրանսական իշխանութիւններուն կողմէ, եւ հոն լոյս ընծայած են՝

ՄՊԱՐՏԱԿ : Խմորատիպ : Ռաքթա, 1927 թ. : Ա. Թիւը՝ 1927 թ.ի Յունուարին սկիզբը : Բ. Թիւը՝ փետրուարին : Միայն 2 թիւ : Խմորատիպ : Մատէեան :

44) «Նար փիւնիկ», Գ. տարի, 1926, Մարտ 27, քիւ (208) :

45) Հայ համայնավարներու կողմէ հրատարակուած քերքերու մասին բաւական տեղեկութիւն կը հայթայթէ Յ. Մատէեան, (Լիբանանի և Սուրիոյ Մէջ լոյս Տեսած Մեր Մամուլի Պատմութիւնէն, «Մեր Նշանաբանն է Յառաջ», 1964, Յուլիս 26, քիւ 31) : Օգտագործելով հանդերձ հոն տրուած տեղեկութիւնները, յաւելումներ կատարեցիմք ամենապէս կատարուած պրպտումներով՝ քէ հատաբաններ աչքի անցնելով եւ քէ հարցաւորներով այդ քերքերուն հետ առնչութիւն ունեցած անները : «Ժողովուրդի Ձայն»ի եւ «Մեր Նշանաբանն է Յառաջ»ի մասին աշխատասիրութիւն մը ունի Կ. Դալլաքեան (Լիբանանահայ Դեմոկրատական Մամուլի Պատմութիւնից, Երևան, 1964) : Դժբախտաբար, Դալլաքեանի գործին մէջ ալ կը պակսին որոշ մանրամասնութիւններ, քուակամներ եւ անուններ :

Աքսորեալները փոխադրուած են Սուբիոյ Կատմոս բերդը եւ հոն պատրաստած են՝

ՆՈՐ ԲԱՍՏԻՅԷԼ ձեռագիր թերթը, 1927 թ.ի Օդեսոսին:

ԿԱՐՄԻՐ ԱՐՇԱԼՈՅՍ: Խմորատիպ: Պէյրութ, 1931-32 թթ.:

4 թիւ: Խմբադրութեան պատասխանատու՝ Յրթ. Մատէեան, աշխատակիցներ՝ Զատիկ (Շահէ) Տատուրեան, Յակոբ Տէր Պետրոսեան, եւն.:

ՄԱՐՏԱԿՈՉ: Մեքենագիր բազմադրուած: Պէյրութ, 1934-35 թ.ի սկիզբը: 4 թիւ միայն: Ա. թիւը՝ 1934 թ.ի Յունիսին: Խմբագիր՝ Յրթ. Մատէեան: Նոյն անունով թերթ մըն ալ հետագային (1951-52 թթ.) լոյս տեսած է Հալէպ, Պարոյր Երէցեանի խմբադրութեամբ, կրկին մեքենագիր բազմադրուած:

Ուրեմն, լիբանանահայ համայնավարները, մինչև 1938 թ., դիմած են դանազան միջոցներու, իրենց ձայնը լսելի դարձնելու համար: 1937 թ.ին, երբ Լիբանանի համայնավար կուսակցութիւնը կ'ունենայ իր օրինաւոր օրկանը, Սաուք Էլ-Շաապը, հայերը, օգտուելով անոր արտօնագրէն, 1938 թ.ի Փետրուարի 6-ին կը հրատարակեն առաջին թիւը ժողովուրդի Ձայն շաբաթաթերթին, որ 84 թիւ լոյս տեսնելէ ետք, 1939 թ.ի Հոկտեմբերի 1-ին կը դադրեցուի: Վերջին թիւին մէջ կը հրատարակուի Ֆրանսական Բարձր Գոմիսարիայի 29 Սեպտ.ի 1939 թուակիր թիւ 258 հրամանագիրը, որ կ'արգիլէր թերթին հրատարակութիւնը: Աւելի ուշ, 1945 թ.ին, Փանոս Արամայիսեան կը գրէ. «Սարսափի այդ պայմաններուն տակ «Ժող. Ձայն»ը սկսաւ հրատարակուիլ ստորերկրեայ խմորատիպ՝ պղտիկ ծաւալով» (46):

Ժողովուրդի Ձայն օրաթերթը կը սկսի լոյս տեսնել 1942 թ.ի Փետրուարի 20-ին, երբ Լիբանանի մէջ պարտուած էին վիշխականները եւ անոնց տեղ անցած՝ տը կողականները: Թերթը շարունակած է լոյս տեսնել մինչև 1948 թ.ի Յունուարի 11-ը: Լիբանանի իշխանութիւնները արգելած են անոր հրատարակութիւնը:

Ժողովուրդի Ձայն շաբաթաթերթի եւ օրաթերթի խմբագիրը եղած է Յովհ. Աղպաշեան: Սկիզբը, կարճ շրջան մը, խմբադրութիւնը վարած են Յովհ. Աղպաշեան եւ Յարութիւն Մատէեան:

46) «Ժող. Ձայն»ի բարեկամներուն, «Ժողովուրդի Ձայն», 1945, քիւ 1017: Փանոս Արամայիսեանի վերոյիշեալ տողերը կարդացողներ կրնան շփոթի մատնուիլ: Արդարեւ, երբ «Ժողովուրդի Ձայն» շաբաթաթերթը կը փակուի, «ստորերկրեայ խմորատիպ» պղտիկ ծաւալով՝ լոյս տեսնող քերթք «Ժող. Ձայն» չէ, այլ՝ «Մպարակ», լոյս տեսած 1940-41 թ.ի կէտերը, խմբագիր՝ Յ. Մատէեան եւ Սեդրակ Ապառեան:

Ժողովուրդի Զայն ամսագիրը (գրական-հասարակադիտական) օրաթերթին հետ զուգընթաց լոյս տեսած է 1943 թ.ի Յունուարին, Փետրուարին, Ապրիլին եւ Մայիսին, ընդամենը՝ 4 թիւ(47)։ Ամսագրին աշխատակցած են՝ Հրանդ Տէվէճեան, Վահէ-Վահէ, Արսէն Աճէմեան, Արտաւազը Սրբազան, Գրիգոր Քէշիշեան, Արիս Շաքիան, Հրաչ Պուճիդանեան, եւն.։ Պժրագիր՝ Յ. Աղպաշեան։

ՅԱՌԱՋ կամ ՄԵՐ ՆՇԱՆԱԲԱՆՆ է ՅԱՌԱՋ (ԻԼԷԼ-էՄԱՄ), 1957 թ.ի Յունուարէն 1964 թ.ի Դեկտեմբերի 13։

ՅԱՌԱՋ Շարաթաթերթ (գրական-հասարակական)։ 1965 թ.ի Հոկտեմբերի 10 - 1970 թ.ի Յունուարի 31։

Այս երկու «Յառաջներու պարագան կը կարօտի լուսաբանութեան, որովհետեւ անոնք եղած են բոլորովին անջատ թերթեր, առանձին արտօնատէրերով եւ արտօնագրերով, տարբեր անուններով, առանձին խմբագիրներով, մէկը եղած է քաղաքական, միւսը՝ գրական-հասարակական։

Մատենադիտական ցանկեր պատրաստողներու եւ մամուլով գրադողներու մօտ բացայայտ չիտթ մը գոյութիւն ունի այս երկու «Յառաջ»ներուն պարագային(48)։

Ժողովուրդի Զայն օրաթերթի դադրեցումէն ետք, մինչեւ 1957 թ.ը, հայ համայնավարներ արտօնագիր չունեցան քաղաքական կամ այլ թերթի հրատարակելու։ 1957 թ.ին, օգտագործելով Նէսիպ Նըմրբի պատկանող Իլէլ-էմամ (հայերէն՝ Յառաջ) արաբերէն թերթի արտօնագիրը, նոյն թուականի Յունուարի 6-ին լոյս կ'ընծայուի Յառաջ անունով շարաթաթերթ մը, քաղաքական բովանդակութեամբ, 8 էջ (58×41 սմ.)։ Առաջին երկու թիւերը լոյս

47) Ա. Տէր Խաչատուրեան ազնայինով «Ժողովուրդի Զայն»ին՝ կը գրէ. «1938-39 թթ. եղած է շարաթաթերթ, 1942-48 թթ. օրաթերթ։ 1943 թ.ին լոյս տեսած է որպէս ամսաթերթ» (ԼՄՅՏ, էջ 272)։ Կը տրուի այն տպագրութիւնը, թէ 1943 թ.ին օրաթերթը դադարած է եւ փոխարէն լոյս տեսած՝ ամսաթերթը։

48) Ա. Տէր Խաչատուրեանի համար գոյութիւն ունի 1957 թ. սկսեալ «Յառաջ» մը, որ կը շարունակէ լոյս տեսնել 1971 թ.ին (ԼՄՅՏ, էջ 204)։ Ա. Կիրակոսեան կը հայտարարէ մի քանի մանրամասնութիւններ. խմբագիր՝ Գ. Աղաբաբեան եւ հրատարակուած՝ 1957-1964 թթ.ում, ինչպէս նաեւ կը յիշատակէ, որ 1957 թ.ի Յունուարին հրատարակուեր է «Մեր Նշանաբանն է Յառաջ» անունով (ՀՊՄՄ, էջ 123)։ Եղուարդ Գիւրեկեան ալ շփոթի մատնուած է. կը յիշատակէ «Յառաջ» մը, 1957-1964, 1966 թթ.ում, որում արտօնատէրն է Նախլէ Մուրթաճեան եւ խմբագրութեան պատասխանատուն՝ Յովհ. Աղպաշեան, (Armenian Press Directory, London, Harq publications, 1971, p. 21)։

կը տեսնեն Յառաջ շարաթաթերթ անունով: Պետութեան ազգարարութեան առջեւ, Գ. Թիւէն սկսեալ կ'օգտադործուի Իլէլ-էմամ անունը արարերէն, որուն վրայ՝ հայերէնով՝ Մեր նշանաբանն է Յառաջ: Սկիզբէն մինչեւ 1963 թ.ի Դեկտեմբերի 15-ը խմբագրութեան պատասխանատուն է Գառնիկ Աղդարեանը: Ապա, Թերթին խմբագրութիւնը վարած է խմբագրական մարմին մը, սկիզբը՝ Յովհաննէս Աղպաշեանի եւ վերջին ամիսներուն՝ Յրթ. Մատէեանի գլխաւորութեամբ: Պատասխանատու տնօրէն՝ Գասպար Տէրտէրեան (սկիզբը՝ Ապտալա Հէյմի):

Թերթի արտօնատէրին ու անոր համախոհներուն մէկ կողմէ, միւս կողմէ՝ Լիրանանի համայնավար կուսակցութեան միջեւ ծագած տարակարծութիւններ պատճառ կը հանդիսանան Մեր նշանաբանն է Յառաջ (Իլէլ-էմամ) Թերթի դադարեցումին, 1964 թ.ի Դեկտեմբերի 13-ին, 436 թիւ լոյս տեսնելէ ետք:

ՅԱՌԱՋ շարաթաթերթ (գրական-հասարակական):

Այս երկրորդ Յառաջը բոլորովին տարբեր Թերթ մըն է: Միւսին հետ միակ հասարակաց գիծը՝ համայնավարներու կողմէ լոյս ընծայուիլն է: Արտօնատէրն է՝ Նախլէ Մութրան: Արտօնագիրը առնուած է ուղղակի Յառաջ անունով, այսինքն՝ նոր արտօնագիր մըն է: Թերթը քաղաքական արտօնագիր չունի, այլ՝ գրական-հասարակական: Առաջին թիւը լոյս կը տեսնէ 1965 թ.ի Հոկտեմբերի 10-ին: Ընդհանրապէս լոյս տեսած 8 էջով (41×28.5 սմ.): Ունեցած է խմբագրական կազմ: Պատասխանատու տնօրէնը եղած է Գասպար Տէրտէրեան, իսկ խմբագրութեան պատասխանատուն՝ Յովհ. Աղպաշեան: Ա. տարին լոյս տեսած է 52 թիւ, Բ., Գ. եւ Դ. տարիները՝ 44-ական թիւ: Ժամանակաւորապէս կը դադրի 1969 թ.ի Հոկտեմբերի 19-ին: Աւելի ուշ, 1970 թ. Յունուարի 31-ին լոյս կը տեսնէ թիւ մը եւս (Ե. տարի, թիւ 1), որ կը հանդիսանայ վերջին թիւը:

ԿԱՆՉ շարաթաթերթ: Պէյրութ, 1971 թ.ի Փետրուարի 20-էն սկսեալ: 8 էջ (45×30 սմ.): Լոյս կը տեսնէ լիբանանեան Ալ-Նիտէ արարական Թերթի որպէս յաւելուած: Խմբագրութեան պատասխանատուն է՝ Յրթ. Մատէեան:

Բ. ԳՐԱԿԱՆ ԹԵՐԹԵՐ

ՆՈՐ ՈՒՂԻ (Պարբերաթերթ): Պէյրութ, 1945-1947 թթ.: 1945 թ.ին լոյս տեսած՝ 4 թիւ, 1946 թ.ին՝ 6 թիւ, իսկ վերջին թիւը՝ 1947 թ.ին(49):

49) «Նոր Ուղի»ի վերջին թիւը՝ թիւ 11-ը (1947 թ.) ընդհանրապէս մո-

Խմբագրական մարմնին անդամներն են՝ Գր. Սխուան, Գր. Քէշիշեան, Յրթ. Գայայեան, Հրաչ Պուճիգանեան եւ Վարսենիկ Պոյաճեան: Վերջին թիւը խմբագրած են՝ Գր. Սխուան, Յրթ. Գայայեան եւ Փանոս Չազրեան:

Նոր Ուղին դադրած է խմբագիրներուն Հայաստան դաղթով: Անուղղակի կերպով հանդիսացած է շարունակութիւնը ժողովուրդի Զայն ամսագրին, որ գրական բովանդակութեամբ լոյս տեսած էր 1943 թ.ին:

Նոր Ուղին ունեցած է ծանօթ գրողներէ բաղկացած աշխատակիցներու խմբակ մը: Թերթի խմբագիրներուն կողքին, անոր աշխատակցած են՝ Վահէ-Վահեան, Աբրահամ Ալիքեան, Ստ. Ալաջալեան, Յովհ. Աղապաշեան, Արամ Արման, Անդրանիկ Թէրզեան, Ս. Ապաճեան եւ ուրիշներ: Ունեցած է նաեւ արար աշխատակիցներ, որոնց գրութիւնները տրուած են թարգմանաբար:

ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ (Գրական եւ դիտական պարբերագիրք): Պէյրութ, 1974 թ., Ա. պրակ: Լոյս տեսած՝ մէկ թիւ: Հրատարակիչ՝ Գ. Աֆարեան(50):

ԺՈՂՈՎԱԾՈՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ (1950 թ.ի Նոյեմբեր - 1954 թ.ի Յունիս):

ՄՇԱԿՈՅԹ. Գիրք Գրականութեան եւ Արուեստի (1954 թ.ի Սեպտեմբեր - 1955 թ.ի Օգոստոս):

ԳԻՐԲ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ (1955 թ.ի Դեկտեմբեր - 1956 թ.ի Հոկտեմբեր, 1959 թ.ի Յունուար - 1959 թ.ի Հոկտեմբեր):

ՅԱՌԱՋ-ԳՐԱԿԱՆ (1961 թ.ի Մարտ - 1964 թ.ի Մայիս):

ԷՋԵՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ (1965 թ.ի Յունուար - 1972 թ.ի Մարտ):

Վերոյիշեալ բոլոր գրական պարբերագրերը, տարբեր ժամանակներու մէջ, եղած են Հայ Համայնավար գրողներու եւ մտաւորականներու գրական, հասարակական ու մշակութային յօդուածներու հանդիսարանը: Անուններու յաճախակի փոփոխութիւնը, հրա-

նացութեամ տրուած է: Ա. Տէր Խաչատուրեան կը յիշատակէ 1945-46 թթ. (ԼՄՅՏ, էջ 294 եւ ԼՄ): Յ. Պետրոսեանն ալ նոյն թուականները կու տայ (Հայ Պարբ. Մասուի Բերլինգրաֆիա, հ. 2, էջ 523): Միայն Ա. Կիրակոսեանն է որ կու տայ նշգրիտ թուականը եւ կը յիշատակէ 11 թիւ լոյս տեսած ըլլալը (ՀՊՄՄ, էջ 409-410):

50) Ա. Տէր Խաչատուրեան Սուրբ Մեսրոպի համար կ'ըսէ՝ «ամբուական... 1940-ական թուականներուն» (ԼՄՅՏ, էջ 295 եւ ԼՄ):

տարակուսեան հերթականութեան անկանոնութիւնը, նոր խմբա-
զիրներու նշանակումը, չափի, ծաւալի, կողքի փոփոխութիւննե-
րը, մանաւանդ հերթական թիւի բացակայութիւնը յառաջացուցած
են շփոթ(51) :

Ա. Տէր Սաչատուրեան, որուն ներկայացուցած ցանկը կարե-
ւի է համարել եղածներուն մէջ նուազ թերութիւններ ունեցողը, այս
կացութեան առջեւ կը գրէ. «Անուններու այս փոփոխումը ի՞նչ նպա-
տակով կատարուած է՝ մեղի համար կը մնայ անյայտ»(52) :

Բ. Աշխարհամարտի աւարտէն քանի մը տարի ետք, լրբա-
նանեան իշխանութիւններուն կողմէ դադարեցուած են Լիրանանիէ հա-
մայնավար կուսակցութեան հրատարակած թերթերը: Կուսակցու-
թիւնը պաշտօնական ճանաչում չէ ունեցած: Ուստի, ինչպէս հա-
մայնավար կուսակցութիւնը, նոյնպէս ալ հայ համայնավարներ,
փորձած են զանազան ձեւերով, միջոցներով ունենալ իրենց թերթը
կամ թերթերը: Երբեմն լոյս ընծայուած են դադարի թերթեր: Յա-
ճախ դիմուած է այլ ձեւերու: Ի չգոյ՛ օրինական արտօնադրի, ամ-
սադրի, պարբերաթերթի, եւն.ի փոխարէն օգտագործուած են «Ժո-
ղովածու», «Գիրք գրականութեան եւ արուեստի», «Էջեր» բացա-
տրութիւնները, քանի որ նոյն անունով ու կանոնաւոր հերթակա-
նութեամբ լոյս տեսնող թերթերն են որ պաշտօնական արտօնադիր
ունենալու պարտադրանքին տակ են: Այս է նաեւ հիմնական պատ-
ճառը, որ շատ յաճախ հերթականութիւնը նշող թիւերն ու թուա-
կանները չեն յարգուած:

Մատենագիտական մտահոգութիւններէ առաջնորդուած, ինչ-
պէս նաեւ զրազարաններու, մատենագիտական ցանկեր եւ ուսում-
նասիրութիւններ պատրաստողներու գործը դիւրացնելու նպատա-
կով, պիտի տանք ամբողջական ցանկը վերոյիշեալ գրական թեր-
թերուն, հաղորդելով նաեւ այդ թերթերուն հետ առնչուող ման-
րամասնութիւններ:

ԺՈՂՈՎԱՅՈՒ Գրականութեան եւ Արուեստի: Պէյրութ, 1950
թ.ի Նոյեմբեր - 1954 թ.ի Յունիս: Էջերու թիւը տարուբերած է
88-206-ի միջեւ (21×15 սմ.): Լոյս տեսած 17 թիւ: Պատասխանա-
տու խմբագիր՝ Պետրոս Մինասեան:

51) Յ. Պետրոսեան, որում գիրքը լոյս տեսած է 1957 թ.իմ, կը յիշատա-
կէ միայն «Մշակոյթ»ը, որում հրատարակութեան քուակամը կը ճշտ 1955 թ.ը,
որ սխալ է (Հայ Պարբ. Մամուլի Բիւր., հ. 2, էջ 560): Թուակամներու, խմբա-
գիրներու եւ հրատարակուած հատորներու քիւիմ շուրջ ակներեւ շփոթ եւ սխալ
տուեալներ կան նաեւ Ա. Կիրակոսեանի գործիմ մէջ (ՀՊՄՄ, էջ 247, 285 եւ 391):

52) ԼՄՅՏ, էջ 282-283:

ժողովածուի 17 թիւերը լոյս տեսած են հետեւեալ թուականներուն.

1950 թ. - Նոյեմբեր (թիւ 1):

1951 թ. - Յունուար (թիւ 2), Մարտ (թիւ 3), Յունիս (թիւ 4), Օգոստոս (թիւ 5), Հոկտեմբեր (թիւ 6), Դեկտեմբեր (թիւ 7):

1952 թ. - Փետրուար (թիւ 8), Մայիս (թիւ 9), Յուլիս (թիւ 10), Հոկտեմբեր (թիւ 11):

1953 թ. - (թիւ 12, ամսաթիւ չկայ), Մայիս (թիւ 13), Յունիս (թիւ 14), Հոկտեմբեր (թիւ 15):

1954 թ. - (թիւ 16, ամսաթիւ չկայ), Յունիս (թիւ չէ յիշատակուած, սակայն պէտք է ըլլայ թիւ 17):

Ապա՝ մէկ քանի ամիս ետք, ժողովածուն սկսած է լոյս տեսնել նոր անունով՝

ՄՇԱԿՈՅԹ (Գիրք Գրականութեան եւ Արուեստի): Պէյրութ, 1954 թ.ի Սեպտեմբեր - 1955 թ.ի Օգոստոս: 96 էջ (21×15 սմ.): Ընդամէնը՝ 5 թիւ: Պատասխանատու խմբագիր՝ Գառնիկ Աղդարեան:

Մշակոյթի հինգ թիւերը լոյս տեսած են հետեւեալ թուականներուն.

1954 թ. - Սեպտեմբեր եւ Նոյեմբեր ամիսներուն:

1955 թ. - Յունուար, Ապրիլ եւ Օգոստոս ամիսներուն:

Մշակոյթը հինգ թիւ լոյս տեսնելէ ետք կը դառնայ՝

ԳԻՐԳ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ: Նոյն չափն ու ծաւալը կը պահպանուին: Պատասխանատու խմբագիրը կրկին Գառնիկ Աղդարեանն է: Լոյս կը տեսնէ 4 թիւ:

1955 թ. - Դեկտեմբերին:

1956 թ. - Ապրիլ, Յուլիս եւ Հոկտեմբեր ամիսներուն:

1956 թ.ի Հոկտեմբերէն ետք, մինչեւ 1959 թ.ի սկիզբը կը դադարի: 1959 թ.ի Յունուար ամիսէն սկսեալ կը վերահրատարակուի Գեղամ Լ. Սեւանի խմբագրութեամբ: Անունը կը մնայ նոյնը: Լոյս կ'ընծայուի երեք թիւ:

1959 թ. - Յունուար, Մայիս եւ Հոկտեմբեր ամիսներուն:

Գեղամ Սեւանի խմբագրութեամբ լոյս տեսած Հոկտեմբերի թիւը՝ պահելով հանդերձ Գիրք Գրականութեան եւ Արուեստի անունը, կողքին վրայ ունի մեծատառ Յառաջ-Գրական (Իլէլ-Էմամ) անունը(53):

53) Ա. Տէր Խաչատուրեան կը յիշատակէ «Յառաջ» անունով քերթ մը եւ որպէս իմրագիր՝ կու տայ Գեղամ Սեւանի անունը (ԼՄՅՏ, էջ 283): Ինչպէս կը տեսնուի, մտան քան գոյութիւն չունի:

Ապա կրկին շուրջ մէկուկէս տարուան դադար մը եւ նոր ա-
նունը կ'ըլայ՝

ՅԱՌԱՋ-ԳՐԱԿԱՆ (54): Գրեթէ ամսագրի կանոնաւորութեամբ
լոյս տեսած է 1961 թ.ի Մարտէն մինչեւ 1964 թ.ի Մայիսը, 12-20
մեծադիր էջերով (41×28 սմ.): Ունեցած է խմբագրական կազմ մը,
սակայն խմբագրական աշխատանքները վարած են՝ Գասպար Տէր-
տէրեան եւ Պետրոս Մինասեան: Լոյս տեսած՝ 26 թիւ, Մեր Նշա-
նարանն է Յառաջ շարաթաթերթի որպէս գրական յաւելում, օգ-
տասիրծելով Իլէլ-էմամ թերթի արտօնադիրը:

1961 թ. - Մարտ, Ապրիլ, Մայիս, Յունիս, Յուլիս, Օգոս-
տոս-Սեպտեմբեր, Հոկտեմբեր-Նոյեմբեր, Դեկտեմբեր:

1962 թ. - Յունուար-Փետրուար, Մարտ-Ապրիլ, Մայիս,
Յունիս, Յուլիս, Օգոստոս-Սեպտեմբեր, Հոկտեմբեր-Նոյեմբեր,
Դեկտեմբեր:

1963 թ. - Յունուար, Փետրուար, Մարտ-Ապրիլ, Յուլիս, Օ-
գոստոս, Սեպտեմբեր, Հոկտեմբեր-Նոյեմբեր:

1964 թ. - Յունուար, Փետրուար-Մարտ, Ապրիլ-Մայիս:

Յառաջ-Գրական լոյս չէ տեսած 1963 թ.ի Մայիսին, Յունի-
սին եւ Դեկտեմբերին: Երբ ստեղծուած տարակարծութիւններու
պատճառով կը դադրի Մեր Նշանարանն է Յառաջ (Իլէլ-էմամ) քա-
ղաքական շարաթաթերթը, կը դադրի նաեւ անոր գրական յաւել-
ումը Հանդիսացող Յառաջ-Գրականը:

1965 թ.ին, կ'որդեգրուի սկզբնական ձեւը եւ լոյս կը տեսնէ՝
ԷՋԵՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ: 1965 թ.ի Յունուա-
րէն - 1972 թ.ի Մարտ: 64-128 էջ (24×17 սմ.): Լոյս տեսած՝ 14
թիւ: Խմբագրութեան պատասխանատու՝ Գառնիկ Աղաբեան: Վեր-
ջին երկու թիւերը - 1970 թ.ի Դեկտեմբեր եւ 1972 թ.ի Մարտ -
խմբագրած է Արմէն Դարեան:

1965 թ. - Յունուար, Մարտ, Յունիս, Դեկտեմբեր:

1966 թ. - Ապրիլ, Հոկտեմբեր:

1967 թ. - Փետրուար, Մայիս, Սեպտեմբեր:

1968 թ. - Մարտ, Սեպտեմբեր:

1969 թ. - Ապրիլ:

54) Ա. Տէր Խաչատուրեան կրքեֆ չի յիշատակիր այս քերքը: Ա. Կիրա-
կոսեան, կը յիշատակէ 1961-67 թթ.ում լոյս տեսած «Յառաջ-Գրական» մը, որուն
խմբագիրները եղած են՝ Գ. Մինասեան, Բ. Մինասեան (ՀՊՄՄ, էջ 123): Թուա-
կանը պէտք է ըլլայ՝ 1961-64 եւ խմբագիրներուն անունը՝ Գ. Տէրտէրեան, Պ. Մի-
նասեան:

1970 թ. - Ամիսը չէ յիշատակուած, սակայն լոյս տեսած՝
Դեկտեմբերին:

1972 թ. - Մարտ:

Անկախ սովետաձայ, արար եւ օտար գրողներու բերած մասնակցութենէն, բաղմամբիւ հայ գրողներ, դանազան ժամանակներու մէջ, աշխատակցած են վերոյիշեալ թերթերուն: Այդ գրողներէն շատեր հետազոյսին հրատարակած են առանձին հատորներ: Ստորեւ աշխատակիցներու ցանկ մը. Ա. Դարեան, Գ. Աղաբաբեան, Գեղամ Սեւան, Պետրոս Մինասեան, Թ. Թորանեան, Լեւոն Վարդան, Յ. Սարգիսեան, Արամ Երեմեան, Հրաչ Զարդարեան, Ա. Նաճարեան, Նշան Շահէն, Սարգիս Վահագն, Յրթ. Լաչինեան, Ժողէֆ (Վահրամ) Հաճեան, Մ. Գուշագեան, Յրթ. Մաթեան, Յակոբ Գուլումճեան, Սիրան Սեղա, Վահէ-Վահեան, Տիգրան Վարժապետեան, Յ. Աղապաշեան, Սեդրակ Ապաճեան, Զարեհ Որբունի, Սմբատ Փանոսեան, Գալուստ Խանենց, Վահրամ Մալեան, Վահէ-Հայկ, Յակոբ Յ. Ասատուրեան, Պէպօ Սիմոնեան, Յ. Նորունի, Երուանդ Կոպէլեան, Հրանդ Գանդրունի, Գ. Տէրտէրեան, Ս. Արմէն, Յրթ. Պէտոյեան (Յուրակ Մեսրոպեան), Գ. Երէցեան, Յ. Պօղոսեան, եւն.:

ՅԱՅԳԱԼՈՅՍ (Պարբերադիրք Գրականութեան եւ Գեղարուեստի): Լոյս տեսած՝ 4 թիւ (25×17 սմ.): Ա. թիւը՝ 1951 թ.ին, Բ. եւ Գ. թիւերը՝ 1952 թ.ին, Դ. թիւը՝ 1953 թ.ին: Խմբագիր՝ Ա. Պիլէյրիկճեան:

ԱՐԱՐԱՏ ԳՐԱԿԱՆ: 1956 թ.ի Յունուարէն սկսեալ մեծադիր էջերով լոյս կը տեսնէ 15 թիւ, որպէս երկշաբաթաթերթ: 1956 թ.ի Նոյեմբերէն - 1963 թ.ի Մայիսը (Ա.-Դ. տարի) լոյս կը տեսնէ զբոսաբերական ձևով (24×17 սմ.): Ընդամէնը՝ 40 թիւ (յաճախ միացեալ թիւեր): Ընդհանրապէս անկանոն լոյս տեսած է: 1961 թ.ին լոյս տեսած է ոչ մէկ թիւ: Խմբագիրներ՝ Յ. Նորունի, Հ. Գանգրունի, Պ. Սիմոնեան: 1963 թ.ի Մայիսին դադարած է:

Արարատ Գրականը վերահրատարակուած է 1964 թ.ի Մայիսի 15-ին, մեծադիր 16 էջերով (45×30 սմ.), որպէս Ե. տարի: Լոյս տեսած է 11 թիւ, մինչեւ 1965 թ.ի Մարտի 15-ը: Ինչպէս կը տեսնուի, վերջին շրջանի 11 թիւերը լոյս տեսած են կանոնաւորաբար, ամիսը անգամ մը: Վերջին երկու թիւերուն վրայ սխալմամբ զբոսաբերական է Ժ. տարի, Ե. տարուան փոխարէն: Վերջին 11 թիւերը ունեցած են խմբագրական մարմին մը, բաղկացած հետեւեալներէն. Յ. Նորունի, Ե. Գարաճեան, Ա. Գաղանճեան (Ա. Վանատուր), Պ. Սիմոնեան, Շ. Մոլոյեան (Մ. Շուշիկ)(55):

55) «Արարատ-Գրական»ի վերջին 11 թիւերը, որոնք առանձին շրջան մը կը

ԵՐԳԻՄԱԳԻՐՔ: Պէյրութ, անթուական, սակայն լոյս տեսած՝ 1961 թ.ին(56): 40 էջ (24×17 սմ.): Նմբազեր՝ Վարուժան Ճինպաշեան(57), պատասխանատու՝ Սարգիս Ս. Սարգիսեան:

7-Ը ՊԱՏՄՈՒԱՄՔՆԵՐ: Անթուական, սակայն լոյս տեսած՝ 1963 թ.ին, Պէյրութ, Տպ. Հայկ: 48 էջ (24×17 սմ.): Կազմողն է՝ Վարուժան Ճինպաշեան: Ինչպէս անունը ցոյց կու տայ, հաւաքածոյ մըն է, որ կը բովանդակէ եօթ պատմուածքներ, եօթ տարբեր հեղինակներու կողմէ գրուած: Պատմուածքներու այս հատորը կարելի է թերթ կամ պարբերաթերթ համարել: Այլպէս՝ տասնեակներով գրականութեան հաւաքածոներ հարկ պիտի ըլլար անցընել պարբերական մամուլի նուիրուած մատենագիտական ցանկերու եւ տշխատասիրութիւններու մէջ(58):

ԱՌԱԳԱՍՏ (Հանդէս՝ Գրականութեան եւ Արուեստի): Պէյրութ, անթուական, սակայն լոյս տեսած՝ 1963 թ.ի ըկիզբը(59): 64 էջ (24×17 սմ.): Լոյս տեսած՝ մէկ թիւ: Հրատարակիչ՝ Յակոբ Թ. Նազարեանց: Պատասխանատու քարտուղարուհի՝ Անահիտ Յաթրութիւնեան:

Գ. ԴՊՐՈՑԱԿԱՆ ԹԵՐԹԵՐ

Լիբանանահայ նորագոյն զաղութի կազմութեան առաջին տարիներուն իսկ, սկսած 1921 թուականէն, արդէն աշակերտական մամուլ գոյութիւն ունի Լիբանանի մէջ: Եթէ առաջին օրերուն, աշակերտական թերթերը ձեռադիր էին եւ կամ լամորատիպ, ժամանակի թաւալքին հետ անոնք կը դառնան տպագրիչ: Այսօր, լիբանանահայ մամուլի ներկայացուցած թիւին շուրջ մէկ երրորդը կը կազմեն ա-

կազմեմ, յիշատակութեամ չեմ արժամացած մայապէս: Միայն Ա. Կիբակոսեան կը յիշատակէ 1947-1965 թուականը, որ բարոյկիմ ամնիշդ է (ՀՊՄՄ, էջ 215):

56) Ըստ Ա. Տէր Խաչատուրեանի՝ «ամթուական, սակայն 1961-62 թուականներում լոյս տեսած» (ԼՄՅՏ, էջ 292 եւ ԼՄ):

57) Նոյն ամնը եղած է մաւ խմբագիրը «Իշամեղու երգիծագիրք», թիւ 1-ի, կրկիմ ամթուական, սակայն լոյս տեսած՝ 1958 թ.ին, 24 էջ (28-5x22 սմ.): Արսօնագիր չունեմալում, դադրած է «Իշամեղու»մ: 1961 թ.ին լոյս տեսած «Երգիծագիրք»ը, որում կոմակի շապիկիմ վրայ կայ իշամեղուի մը մկարը, կարելի է հաշուել թիւ 2-ը:

58) Ա. Տէր Խաչատուրեան «7-ը պատմուածքներ»ը (կը գրէ՝ «Եօթը պատմուածքներ») կը համարէ պարբերաթերթ, որում հրատարակութեամ թուականը ամծամօք է (ԼՄՅՏ, էջ 292 եւ ԼՄ):

59) Ըստ Ա. Տէր Խաչատուրեանի՝ 1962 թ.ին (ԼՄՅՏ, էջ 291 եւ ԼՄ):

չակերտական հրատարակութիւնները, ընդհանրապէս պարբերաթերթի եւ տարեգիրքի ձեւով լոյս տեսնող: Կարգ մը պարագաներու, դպրոցական թերթերը ունեցած են եւ ունին աշակերտներէ բաղկացած խմբագրական կազմեր, ընդհանրապէս հայ դրականութեան դասատուին հակողութեան տակ: Դպրոցական կարգ մը թերթեր, որպէս խմբագիր ունին անօրէնը կամ ուսուցիչներէ կազմուած խմբագրական մարմին մը: Ուստի, մատենադիտական աշխատասիրութիւններու մէջ, զգուշանալու է խմբագրական կազմ կամ խմբագիրներու անուններ տալէ, նկատի ունենալով որ անոնք շատ յաճախ, նոյնիսկ տարուէ տարի, փոփոխութիւններ կը կրեն:

ՆՈՐ ԴԱՐ: Նահր Իպրահիմ (Լիբանան), 1923 թ.: Խմորատիպ, մէկ թիւ(60):

ՏՈՒՆ (Աշակերտական ամսագիր): Հրատ. Ճիպէյլի Ամերիկեան Որբանոցի: 1922 թ.ի Սեպտեմբերէն - 1925 թ.ի Յունիսը: Գրեթէ կը բոլորէ երեք տարի եւ լոյս կը տեսնէ կանոնաւորաբար: 18-րդ թիւէն սկսեալ Տուևի հրատարակութեան գործերը կը ստանձնէ որբանոցէն ներս ստեղծուած Գրական Ակումբը: Տուևը լոյս կը տեսնէ մինչև Որբանոցին փակումը(61):

1925 թ.ին լոյս կը տեսնէ Տուևի միացեալ թիւ մը (29-33), Յունուար-Մայիս ամիսներուն համար, 40 էջ, նկարազարդ: Յունիսին թիւ մըն ալ լոյս կը տեսնէ (թիւ 34), եւ յաջորդ ամիս կը փակուի որբանոցը եւ կը դադրի Տուևը:

ՍԻՓԱՆ (Պարբերաթերթ Հայ Աւետ. Գողէճի)

Սիփանի անդրանիկ թիւը լոյս տեսած է 1925 թ.ին, երբ հաստատութեան անունն էր Հայ Աւետարանական Մանչերու Վարժա-

60) Ա. Տէր Խաչատուրեան միայն անգամ մը կը յիշատակէ «Նոր Դար»ի հրատարակութեան բուսկանը - 1924 թ. («Ազդակ», 1960, Սեպտ. 24): Իսկ աւելի ուշ պատրաստած ցանկերում մէջ (ԼՄՅՏ, էջ 294 եւ ԼՄ) բուսկան չի յիշատակեր: Եթէ մկատի ունենանք որ «Նոր Դար» նախ իպրահիմի որբանոցին քերթիմ էր, ամպայամօրէն ամ լոյս տեսած պէտք է ըլլայ 1923 թ.ին, քան որ որբանոցը հաստատուած է 1923 թ.ի գարնան, իսկ աշնան, մալթիայի համաճարակի պատճառով, փակուած է, եւ շուրջ 1200 որբերը փոխադրուած են Ճիպէյլ եւ Անթիպիս (տես՝ Ղ. Տ. Պետրոսեան, Որբին Գիրքը, Պէյրութ, 1932, էջ 87):

61) Ա. Կիրակոսեանի եւ Ա. Տէր Խաչատուրեանի համար «Տուևը» լոյս տեսած է մինչև 1924 թ. (տես՝ ՀՊՄՄ, էջ 460, ԼՄՅՏ, էջ 295 եւ ԼՄ): Իսկ Յունուար-Մայիս Ճիպէյլի Ամերիկեան Որբանոցի (Պէյրութ, 1969, էջ 155) հատորին մէջ կ'ըսուի. «Տուև»ի հրատարակութիւնը պիտի տեսնէր երեք տարի լամ, լոյս պիտի տեսնէին երեսուն վեց թիւեր, մինչև որբանոցի փակումը...»: Ինչպէս տեսանք, «Տուև» միայն 34 թիւ լոյս տեսած է:

րան, որուն տնօրէնն էր՝ Պետրոս Գարծայր: Դպրոցը կը դառնուէր Սըրտօք փողոցը (62):

1949 թ.ի Նոյեմբերի 15-էն սկսեալ լոյս կը տեսնէ մեքենադիր բազմապրուած մեծադիր էջերով (33×21 սմ.): Մինչեւ 1951 թ.ի Ապրիլ ամիսը՝ 9 թիւ: Նոյն տարուան Նոյեմբերին կը սկսի Գ. տաւրին եւ լոյս կը տեսնէ չորս թիւ: Ապա՝ թիւ մը 1952-53 տարեշրջանին, ուրիշ մը՝ 1953-54 տարեշրջանին (այս վերջին թիւին վրայ սխալմամբ դրուած է 1952-53): Ուրեմն՝ մեքենադիր բազմապրուած 15 թիւ Սիփան լոյս տեսած է 1949 թ.ի Նոյեմբերէն՝ 1954 թ.ը, որպէս պարբերաթերթ:

Առաջին սպադիր Սիփանը լոյս կը տեսնէ 1954 թ.ի Յունիսին, վեր. Տ. Ուրրեանի տնօրէնութեան շրջանին: Ասոր վրայ ալ գըրուած է «պարբերաթերթ»:

1958-59 կրթական տարեշրջանին կը սկսի լոյս տեսնել Սիփան տարեգիրքը, մինչեւ 1962 թ.: Ընդամէնը՝ 4 գիրք:

1962-63 տարեշրջանին, Գոլէճի տնօրէնութեան եւ Հայերէնի բաժանմունքի որոշումով՝ Սիփանը կը դառնայ եռամսեայ հրատարակութիւն եւ լոյս կը տեսնէ 3 թիւ (24×17 սմ.): Ա. թիւը, 1962 թ.ի Նոյեմբեր-Դեկտեմբերին, խմբագիր՝ Ա. Տէր Սաչատուրեան: Բ. թիւը, 1963 թ.ի Ապրիլին, խմբագիր՝ Երուանդ Հ. Գասունի, իսկ Գ. թիւը, նոյն տարուան Յունիսին, խմբագիրներ՝ Կարօ Պետրոսեան եւ Ա. Տէր Սաչատուրեան:

1963-64 տարեշրջանէն սկսեալ Սիփան կրկին տարեգիրքի կը վերածուի: Ա. տարին կը խմբագրէ Երուանդ Հ. Գասունի, իսկ 1965 թ.էն սկսեալ՝ տնօրէն Ջաւէն Մսրըլեան: Կը շարունակէ լոյս տեսնել:

62) «Սիփան»ի 1925 թ.ին հրատարակուած բլլալում մասին կ'ամբարշտանայ տնօրէն վեր. Բիւզանդ Ռուպեան («Սիփան», 1952-53, էջ 1): Դժբախտաբար, յանկեալ տեղեկութիւն կարելի չեղաւ ձեռք գտնել այդ շրջանի «Սիփան»ի մասին: Վարժարանի այժմու տնօրէն՝ Զաւէն Մսրըլեանի կողմէ պատրաստուած «ժամօրագրութեան» մը մէջ կը կարդանք. «Պարբերականը 1925-էն 1955 խմբարարի կամ մեքենագիր բազմապրեալ ձեռով հրատարակուած է, երկար ընդմիջումներով: Սակայն 1947-1953 Պ. Խ. Գալուստեանի տնօրէնութեան շրջանին երեց աշակերտներու գործակցութեամբ հրատարակութիւնը եղած է անլի կամոմատը»: Ա. Տէր Սաչատուրեան կը յիշատակէ միայն «Սիփան» տարեգիրքը՝ սկսած 1964 թ.էն (ԼՄՅՏ, էջ 296 եւ ԼՄ): Ա. Կիրակոսեան կը յիշատակէ «Սիփան» պարբերաթերթը, 1954 եւ 1962-63 թթ.ում, ինչպէս նաեւ «Սիփան» տարեգիրքը, 1958-1967 թթ.ում (ՀՊՄՄ, էջ 439):

Նոյն վարժարանը ունի նաև մեքենադիր բազմազրուած բազմաթիւ հրատարակութիւններ:—

ԱՆԻ (Պարբերաթերթ պատմութեան ակումբի): Ա. թիւը լոյս տեսած 1965 թ.ի փետրուարին: Այս հրատարակուած թիւեր՝ Յունիս 1965, Մայիս 1966, Դեկտ. 1967, Մարտ 1969, Մարտ 1970, Մարտ 1971, Մարտ 1972, Ապրիլ 1973:

ԲԻԻՐԱԿԱՆ (Պարբերաթերթ զիտական ակումբի): Ա. թիւը լոյս տեսած 1965 թ.ի Յունուարին: Այս հրատարակուած թիւեր՝ Յունիս 1965, Մարտ 1967, Մայիս 1971, Մայիս 1972, Յունիս 1973:

ՁՈՒԱՐԹՆՈՑ (Պարբերաթերթ Սուրբ Գրքի ակումբի): Հրատարակուած թիւեր՝ Մայիս 1970, Մայիս 1971, Մայիս 1972, Յունիս 1973:

ԳԱՌՆԻ (Հրատարակութիւն հայկական ակումբի): Հրատարակուած թիւեր՝ Յունուար 1964, Ապրիլ 1964, Դեկտեմբեր 1964, Ապրիլ 1965, Յունիս 1969, Յունիս 1970, Յունիս 1972:

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ (Պարբերաթերթ երաժշտութեան ակումբի): Ա. թիւը լոյս տեսած 1973 թ.ի Յունիսին:

ԱՆԹԱՄԱՐ: Նոյն Գոլէճի ԺԱ. դասարանը, 1971 թ.ի փետրուարին, ունեցած է իր պատի թերթը՝ Այրքամար անունով (1 թիւ): Իսկ նոյն տարուան Ապրիլին, «Ապրիլ 24» խորագրով լոյս ընծայուած է 12 մեծադիր էջանոց (50×35 սմ.) թերթ մը, որուն վերջին էջին վրայ դրուած է. «Հայ Աւետ. Գոլէճի աւարտական դասարանի մշակութային յանձնախումբ — «Ախթամար»»: Խմբագիր՝ Վաչէ Պարտուեան:

Ասոնցմէ անկախ, նոյն Գոլէճի արարական ակումբը, 1963 թ.ի Դեկտեմբերէն սկսեալ հրատարակած է Մատալ-Թուլլապը՝ արարերէն լեզուով, իսկ անգլիական ակումբը՝ նոյն թուականէն սկսեալ՝ Փէֆը, անգլերէնով:

ՈՒՍԱՆՈՂ (Պարբերաթերթ Ազգային Սահակեան Բարձրագոյն վարժարանի): 1948 թ.ի Յունուարէն սկսեալ: Ա. տարին լոյս տեսած՝ 4 թիւ(63):

Ուսանողը կը հանդիսանայ դպրոցական տպագիր թերթերու ամենէն երկարակեացը:

ԱՐՓԻ (Պարբերաթերթ Հայ Աւետ. Կեդրոնական Բարձրագոյն վարժարանի): Պէյրուսի, 1948-1949 կրթական տարեշրջանէն սկսեալ: Եղած է մեքենադիր բազմազրուած թերթ: Ա. թիւը՝ 1949 թ.ի

63) Ա. Տէր Խաչատուրեան եւ Յ. Պետրոսեան «Ուսանող»ի կրտս. քուակաճը կու տան 1949-ը, փոխանակ 1948-ի (տես՝ ԼՄՅՏ, էջ 294 եւ ԼՄ. Յ. Պետրոսեան, Հայ Պարբ. Մամուլի Բերլ., հ. 2, էջ 550):

Յունուարին, Օր. Լ. Փանոսեանի գլխավորութեամբ: Ապա՝ շարունակուած է 1953-1954 թթ.ուն: Շրջան մը դադարած է: Նոյն հաստատութենէն՝ 1960 թ.ին լոյս տեսած է տպագիր Հումնագր, 76 էջ (24×17 սմ.): Մէկ թիւ միայն: 1964 եւ 1965 թթ.ուն, լոյս տեսած է՝

ԱՐՓԻ տարեկիրքը: Ա. տարին (1964 թ.) եղած է փոքրագիր, 48 էջ (24×17 սմ.): Բ. տարին (1965 թ.) մեծադիր, 64 էջ (27×21 սմ.):

Տարեկիրքերը խմբադրուած են հետեւեալ ուսուցիչներուն կողմէ. Գ. Գարապոյաճեան, Հ. Չալեան, Վ. Անթոնյան:

Ապա՝ Արփին կը սկսի լոյս տեսնել որպէս աշակերտական պարբերագիրք՝ 1965-66 կրթական տարեշրջանին, մինչեւ 1967: Լոյս կը տեսնեն 4 թիւեր, առաջին երեքը մեքենագիր բազմադրուած, վերջինը՝ բազմատիպ ձեռագիր (28×21 սմ.) (64):

Նոյն վարժարանը վերջին տարիներուն ունեցած է մեքենագիր դասարանային թերթեր:

ՋԱՀԱԿԻՐ (Լսարանական ամսաթերթ Նշան Փալանճեան ձեմարանի): 1951 թ.էն սկսեալ: Այժմ՝ պարբերաթերթ: Ա. տարին լոյս տեսած՝ 5 թիւ, խմորատիպ, մեծադիր (33×21 սմ.): 1952 թ.ին, թիւ 6-էն սկսեալ կը դառնայ տպագիր, փոքրագիր (24×17 սմ.):

ԼՈՅՍԻ ԺԱՌԱՆԳ (Պարբերաթերթ): Անթիլիաս, 1951 թ.ի Ապրիլ, թիւ Ա.: Հրատարակութիւն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեմանքի սաներու: Խմբագրական մարմին՝ Եղիա Նաճարեան եւ Սարգիս Համպոյեան: Լոյս տեսած՝ մէկ թիւ, 29 էջ (33×22 սմ.), բացառիկ թիւ՝ նուիրուած Սրբոց Վարդանանց Նահատակութեան հաղարհինգարիւրամեակին: Մեքենագիր բազմադրուած (65):

ՆՈՒԻՐՈՒՄ (Պարբերաթերթ Հ. Բ. Ը. Մ.ի Յովակիմեան-Մանուկեան Երկրդ. Վարժարանի): 1953 թ.ի Մարտէն սկսեալ (66): Ա. տարին լոյս տեսած՝ 2 թիւ (Մարտ, Յուլիս), մեքենագիր բազմադրուած մեծադիր էջերով (33×21 սմ.): 1954 թ.էն սկսեալ՝ տպագիր, փոքրագիր (24×17 սմ.): 1966 թ.էն սկսեալ դարձած է տարեկիրք:

64) Ըստ Ա. Տէր Խաչատուրեանի, «Արփի»ն լոյս տեսած է «1953-54 թ.ին, 3 թիւ, եւ յետոյ վերհրատարակուած», իսկ «Արփի» տարեգիրքը՝ 1964 թ.ին, մէկ տարի միայն (ԼՄՅՏ, էջ 292 եւ 295, ԼՄ):

65) Միայն Ա. Կիրակոսեան կը յիշատակէ այս թերթը (ՀՊՄՄ, էջ 297):

66) Ըստ Ա. Տէր Խաչատուրեանի, «Նուիրում»ը սկսած է 1952 թ.էն (ԼՄՅՏ, էջ 294 եւ ԼՄ): Ըստ Եղուարդ Գիւլբեկեանի՝ 1951 թ.ին (Հայկական Մամուլի Ցուցակ, Լոնտոն, 1971, էջ 51):

ԿՆՆԱՅ (Տարեգիրք Կենաց Երկրորդական վարժարանի): 1957-58 կրթական տարեշրջանին սկսեալ: 1963-1966 թթ. ուն լոյս տեսած է եռամսեաներու դրուժեամբ, 9 թիւ: Ապա կրկին՝ տարեգիրքի ձեւով, մինչեւ 1972: 1973 թ. ին տարեգիրքին անունը եղած է Տաքիւ(67):

ՄՈՒՍԱ ԱՆՈՒ: 1962-63 տարեշրջանը կը հանդիսանայ Ա. տարին, լոյս կը տեսնէ՝ 4 թիւ, մեքենագիր բազմադրուած (29×21 սմ.): Բ. տարի թիւ 1-էն սկսեալ՝ տպագիր, փոքրադիր: Մինչեւ թիւ 6 եղած է «պարբերագիրք Աղբ. Յառաջ վրժ. ի շրջանաւարտից միութեան»: Թիւ 7-էն (1966 թ.) սկսեալ՝ «Պարբերագիրք Աղբայրին Յառաջ Գոյլէճի»: Թիւ 13-էն (1970 թ.) սկսեալ՝ «Տարեգիրք Աղբայրին Յառաջ-Կիւլպէնկեան Գոյլէճի»:

ԿԱՅԾ (Հրատարակութիւն Նոր Բարձրագոյն Վարժարանի): Պէյրութ, 1960 թ. Մայիսէն - 1964 թ. ի Հոկտեմբեր: Ընդամէնը՝ 5 թիւ: Խմբագիրները եղած են վարժարանի շրջանաւարտներ եւ բարձրագոյն կարգի աշակերտներ: 5 թիւերը լոյս տեսած են հետեւեալ կարգով. Մայիս 1960, Մարտ 1961, Դեկտեմբեր 1962, Դեկտեմբեր 1963, Հոկտեմբեր 1964(68):

ՆԱԻԱՍԱՐԴ (Ուսանողական հանդէս Հայկազեան Գոյլէճի): 1962 թ. էն սկսեալ: 1962-1963 թ. ին լոյս կը տեսնէ 4 թիւ: 1964 թ. ին լոյս կը տեսնէ Նաւասարդ տարեգիրքը, որ կը դառնայ 5-րդ թիւը: Վերստին լոյս կը տեսնէ 1968 թ. ի Մայիսին, 1969 թ. ի Մարտին եւ Ապրիլին: Կրկին դադար մը, եւ 1973 թ. ին լոյս կը տեսնէ 9-րդ թիւ մը:

Նաւասարդը Հայկազեան Գոյլէճի հայ ուսանողութեան միակ թերթն է, որ ամբողջութեամբ հայերէն բովանդակութիւն ունեցած է: Ասկէ անկախ, Հայկազեանի ուսանողները - հայ թէ օտար - ունեցած են այլ թերթեր, որոնց խմբագիրներն ու աշխատակիցները եղած են բազմազգի: Այդ թերթերն են.

67) Ըստ Ա. Տէր Խաչատրեանի, «Կենաց» լոյս տեսած է 1960-1964 թթ. ուն, որպէս տարեգիրք (ԼՄՅՏ, էջ 296): Ըստ Ա. Կիրակոսեանի՝ 1957-1965 թթ. ուն (ՀՊՄՄ, էջ 314):

68) «Կայծ» գաղթած է լոյս տեսնել 1964 թ. ին: Ա. Տէր Խաչատրեան 1972 թ. ին լոյս տեսնող քերթերու ցանկին մէջ կը յիշատակէ գայմ (տես՝ Արտասահմանի Ներկայ Հայ Մամուլը «Մփիւռ» Այսօր» Յուգոսլաւիայի գրքոյկին մէջ): Ա. Կիրակոսեան «Կայծ»ի հրատարակութեան քուակամը կը մկատէ 1960-63: Ա. Կիրակոսեան կ'ընէ մտի այլ սխալ մը. եթէ թիւը լոյս տեսած է Մայիս ամսուն, կը խորհի թէ այդ տարուան 5-րդ համարն է ան, քանի որ Մայիսը 5-րդ ամիսն է (ՀՊՄՄ, էջ 309): Ա. Կիրակոսեան այս սխալը կը կրկնէ բազմաթիւ քերթերու պարագային:

CLARION - Նախապէս տեսանք:

SPECTRA - 1961 թ.ի Դեկտեմբերէն - 1968 թ.ի Յունիս: Ընդամէնը՝ 22 թիւ (30×22 սմ.):

HAIGAZIAN ALUMNUS - Շրջանաւարտից վարչութեան կողմէ հրատարակուած, 1965 թ.ի Մայիսին, տպագիր, 4 էջ (30×22.5 սմ.) եւ թիւ մըն ալ 1969 թ.ին, մեքենագիր բաղմազրուած:

HAIGAZIAN HERALD - 1968-69 տարեշրջանէն սկսեալ (40×28 սմ.) (69): Ա. թիւը 1969 թ.ի Յունուարին:

1968-1970 թթ.ուն Հայկազեան Հերբլտ-ի որպէս զբական յաւելուած լոյս կը տեսնէ Սփեքթրա մը, 3 թիւ ընդամէնը, զբոյժի ձեւով (24×17 սմ.):

FOCUS - Պատկերագարու տարեգիրք Հայկազեան Գոլէճի: Սկսած է լոյս տեսնել 1971 թ.ին:

ԵԱՂԿԱՁՈՐ (Ուսանողական պարբերաթերթ Սրբոց Քառասնից Մանկանց Ազգ. Բարձր. Վարժարանի): Անթուական, սակայն լոյս տեսած 1964 թ.ին, մէկ թիւ միայն: 32 էջ (24×17 սմ.):

ՏԱՐԵԳԻՐԲ ԼԵՒՈՆ ԵՒ ՍՈՖԻԱ ՅԱԿՈՒԵԱՆ ԳՈՒԼԷՃԻ: Պէյրուս, 1965-1969 թթ.: Ընդամէնը՝ 5 գիրք (28×20 սմ.): 1969 թ.էն է վեր լոյս չէ տեսած:

ՅՈՒՔԵՐ (Տարեգիրք Հայ Աւետ. Շամլեան-Թաթիկեան Երկրդ. Վարժարանի): Պէյրուս, 1969 թ.էն սկսեալ: 1970-71 տարեշրջանին լոյս չէ տեսած: Յարդ՝ երեք գիրք (30×22 սմ.) (70):

Գ. ԱՅԼԱԶԱՆ ԹԵՐԹԵՐ

ԺՊԻՏ (Երգիծաթերթ): Պէյրուս, 1928(71): Խմբագիր՝ Միհրան Նաճարեան: 2 մեծագիր էջ: Լոյս տեսած՝ քանի մը թիւ: Եղած

69) Ըստ Ա. Տէր Խաչատուրեանի՝ 1966 թ.էն սկսեալ (տես՝ Արտասահմանի ներկայ Հայ Մամուլը):

70) Եղուարդ Գիւլբէկեան կը յիշատակէ «Յոլքեր»-ը, սակայն բուականը կու տայ 1967 (Հայկ. Մամուլի Յուլգա, էջ 43): Ա. Տէր Խաչատուրեան երկու առիթներով (ԼՄՅՏ, էջ 295 եւ Արտ. ներկայ Հայ Մամուլը) կը յիշատակէ «Յոլք» ամուսնով պարբերաթերթ մը, որ գոյութիւն չուի: Հաւանաբար կը շփոթէ 1969 թ.ին սկսած «Յոլքեր» տարեգիրքին հետ:

71) «Ժպիտ»ի հրատարակութեան բուականը 1927-ը մկատող առաջին անգը համոզեացած է Յովհ. Պետրոսեան (Հայ Պարբ. Մամուլի Բերլ., հ. 2, էջ 423): Իրմէ ետք, Ա. Կիրակոսեան (ՀՊՄՄ, էջ 286) եւ Ա. Տէր Խաչատուրեան (ԼՄՅՏ, էջ 293 եւ ԼՄ) կրկնած են Պետրոսեանի յիշատակած բուականը: Ճշգրիտ բու-

է Միհրան Նաճարեանի խմբագրած Սահակ-Մեքրոպ ամսագրերի երգիծական յաւելուածը: Թերթին գլխաւոր աշխատակիցը հանդիսացած է Յակոբ Թորոսեան, որ ստորագրած է Կ. Պիծակ ծածկանունով:

ՃԵՄ-ԱՐԻ (Պարբերագրութիւն Հայ Ճեմարանի Արիներուն): Պէտրութ, 1938 թ.ի Յունուարէն-Մայիս: Լոյս տեսած ընդամէնը 5 թիւ: 12-16 էջ (21×14 սմ.): Պատասխանատու՝ Ն. Զորագեան(72):

ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂ (Պարբերագրութիւն Հայ Համալսարանական Ուսանողներու Միութեան գրական յանձնախումբին): 1943 թ.ի Մայիսէն - 1944 թ.ի Յունիս: Ընդամէնը՝ 3 թիւ: Առաջին թիւը՝ մեքենագիր բազմագրուած, որուն վրայ Հայ Ուսանող անունը չէ յիշատակուած, այլ՝ Հ.Բ.Լ.Մ. Հ.Ե.Լ. Հ.Հ.Ո.Մ.: Խմբագրութիւն՝ Գր. Քէչիչեան, Ս. Բիրէնեան, Գ. Գասպարեան, Վ. Պոյաճեան: Հ. Բ. Լ. Միութեան Հ. Ե. Ընկերակցութեան Համալսարանական Ուս. Միութեան թերթն է եղած(73):

ՄԵՐ ԿԵԱՆՔԸ (Տեղեկատու Հայոց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու): Անթիլիաս, 1950-1956 թթ.: Մեքենագիր բազմագրուած: Մինչեւ 1954 թ. խմբագիր եղած է Լեւոն Զէնեան: Վերջին երկու տարիներուն՝ Մեսրոպ Էթարեան: (33×21 սմ.): Ապա՝ լոյս տեսած Դրագարկ անունով:

ԴՐԱԶԱՐԿ (Պաշտօնագրութիւն Հայոց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու): Անթիլիաս, 1961-62 թթ.: Տպագիր: Մեր կեանքը-ին շարունակութիւնը հանդիսացած է: Խմբագիր՝ Հ. Վարդան Տէմիրճեան: 1961 թ.ի Սեպտեմբերի սկսեալ լոյս տեսած է 12 թիւ: (27×20 սմ.):

Դրագարկը, որպէս պարբերագրութիւն դադարած է մինչեւ 1966 թ.ը: 1967 թ.ին սկսած է լոյս տեսնել որպէս տարեգիրք:

կամը ըլլալու է 1928 թ.ի Յուլիսը: Այս մասին վկայութիւն մը կայ Մ. Նաճարեանի «Սահակ-Մեքրոպ» ամսագրի թիւ 9-ին մէջ (Ա. տարի, 1928, Յուլիս). «Փնտռեցէ՛ք յետադարձ «Սահակ-Մեքրոպ» յաւելուածակամ թիւը - ժպիտի բաժին - , մոյս եւ շահեկան բովանդակութեամբ»: Նախապէս լոյս տեսած «Սահակ-Մեքրոպ» յայ թիւի մէջ մտնալ յայտարարութիւն չկայ: Ուստի, հիմնուելով վերոյիշեալ մէջբերումին վրայ, հաստատօրէն կարելի է ըսել, թէ «ժպիտ»ը, աւելի ճիշդ՝ «ժպիտի բաժին»ի առաջին թիւը լոյս տեսած է «Սահակ-Մեքրոպ»ի 9-րդ թիւին հետ, այսինքն՝ 1928 թ.ի Յուլիսին:

72) Ըստ Ա. Տէր Խաչատուրեանի «Ճեմ-Արի»ն լոյս տեսած է «1937, քամի մը թիւ» (տես՝ ԼՄՅՏ, էջ 293 եւ ԼՄ):

73) Ըստ Ն. Գասպարեանի «Հայ Ուսանող»ը լոյս տեսած է 1942-43 թթ.ուն («Պատմա-բանասիրական Հանգէս», 1961, թիւ 3-4, էջ 323): Ըստ Ա. Տէր Խաչատուրեանի՝ 1943 թ.ին (ԼՄՅՏ, էջ 293):

ԴՐԱԶԱՐԿ (Տարեգիրք Հ. Ե. Կ. Դ. Ի): Պէյրութ, 1957-1971 թթ.: Լոյս տեսած՝ 5 գիրք (24×17 սմ.): 1971 թ. Ի տարեգիրքին հրատարակութիւնը աւարտած է 1973 թ. Ին: Խմբագիր՝ Տէրայր Վրդ. Փանոսեան(74):

ՓԱՐՈՍ (Երգիծաթերթ): 1951 թ. Ի Յունուարէն - Յունիսի 19, 24 թիւ: 1952 թ. Ի Յունուարէն - Յունիսի 31, 22 թիւ:

Արտօնատէր՝ Բ. Տէր Գէորգեան: Լոյս սկսած է տեսնել որպէս երկչարաթաթերթ: 3-րդ թիւէն՝ տասնօրեայ: Թիւ 10-24՝ շաբաթաթերթ: Ժամանակաւորապէս կը դադրի 24-րդ թիւէն (Յունիսի 19), մինչեւ յաջորդ տարուան սկիզբը: Վերստին լոյս տեսած՝ 1952 թ. Ի Յունուարին, որպէս երկչարաթաթերթ: Թիւ 30-էն սկսեալ՝ կրկին շաբաթաթերթ, մինչեւ դադրելը՝ 1952 թ. Ի Յունիսի 31-ը: Ընդամէնը՝ 46 թիւ (30×22 սմ.): Թիւ 25-էն սկսեալ խմբագիրը եղած է Պետրոս Գիրէջեան(75):

ՊՐԻՄՄԱԿ (Անկախ շաբաթաթերթ): 1951 թ. Ի Փետրուարէն - Սեպտեմբերի 20, 29 թիւ: 1952 թ. Ի Յունիսի 19 - 1953 թ. Ի Յունուարի 17, 23 թիւ:

Հիմնադիր՝ Պարգեւ Պարսոմեան: Թիւ 29-էն ետք (1951 թ. Ի Սեպտեմբերի 20) կը դադրի շուրջ տարի մը: Այս կը վերահրատարակուի 1952 թ. Ի Յունիսի 19-ին, որպէս Բ. տարի: Բ. տարուան առաջին թիւին վրայ դրուած է թիւ 29, փոխանակ՝ 30-ի: Վերջնականապէս դադրած է՝ 1953 թ. Ի Յունուարի 17-ին: Ընդամէնը՝ 52 թիւ (30×22 սմ.)(76):

ԲԱՆՈՒՈՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ (Օրկան Լիբանանի բանուոր դասակարգի): Նոյն անունով արաբերէն լոյս տեսնող բանուորական թերթի նմանութեամբ: Պէյրութ, 1952 թ. Ի Մարտ-Ապրիլ ամիսներուն, ընդամէնը 3 թիւ, մեծադիր չորս էջ: Խմբագիրներ՝ Պօղոս Թիւթիւնճեան եւ Գէորգ Տէր Նիկողոսեան(77):

74) Ա. Տէր Խաչատուրեան կը յայտնէ, թէ «Մեր կեանքը» լոյս տեսած է 1950-54 թթ.ում (ԼՄՅՏ, էջ 294 եւ ԼՄ), իսկ «Իրագարկ» տարեգիրքը՝ միայն 1967-68 թթ.ում, 2 թիւ (ԼՄՅՏ, էջ 295 եւ ԼՄ): Ա. կիրակոսեանի համար «Իրագարկ» պարբերաբարքը լոյս է տեսած 1962 թ. Ին (ՀՊՄՄ, էջ 259):

75) Ա. Տէր Խաչատուրեան «Փարոս»ի հրատարակութեան թուական կուտայ 1951-ը միայն (ԼՄՅՏ, էջ 295 եւ ԼՄ): Ա. կիրակոսեանի համաձայն՝ 1951-52 եւ գայն կը մկատէ «Երգիծական երկչարաթաթերթ» (ՀՊՄՄ, էջ 463):

76) Ըստ Ա. Տէր Խաչատուրեանի՝ «Պրիմալ» լոյս տեսած է 1951 Փետրուար - 1952 Դեկտեմբեր (ԼՄՅՏ, էջ 294 եւ ԼՄ):

77) Ա. Տէր Խաչատուրեանը միակն է որ յիշատակած է այս բերքը: 1961-ին (Հայ Մամուլի Ցուցահանդէս, էջ 17) եւ 1970-ին (ԼՄ) միայն բերքին անունը

ՎԱՐԱԳ (Եռամսեայ պարբերաթերթ Համավասպուրականի Հայրենակցական միութեան): Պոսթըն, 1953 թ.ի Ապրիլէն սկսեալ: 1963 թ.ի Յունուարէն սկսեալ մինչեւ 1970 թ.ի Յուլիսը Վալազ կը խմբագրուի եւ կը հրատարակուի Պէյրութի մէջ: Այսինքն՝ թիւ 40-70: Մինչեւ 1967 թ.ի Յուլիսը խմբագիրն է Վ. Փափազեան (Կոմս): Ապա՝ մինչեւ 1970 թ.ի Յուլիսը, թիւ 58-70, խմբագրութիւնը վարած է Խոսրով Թիւթիւնճեան: Թիւ 70-էն ետք, թերթը շարունակած է լոյս տեսնել Պոսթըն(78):

ԶԱՐԹՕՆԻՐ-ՍՓՈՐ (Շարաթական յաւելուած Զարթօնօ օրաթերթի): 1955 թ.ի Փետրուարի 14 - 1957 թ.ի Նոյեմբերի 18: Լոյս կը տեսնէ 140 թիւ: Ապա, շուրջ մէկուկէս տարի դադարելէ ետք, կրկին լոյս կը տեսնէ 1959 թ.ի Փետրուարի 23-ին, վերջնականապէս դադարելու համար՝ նոյն տարուան Յունիսի կէսին: Խմբագիրը եղած է Վարուժան Պետրիկեան(79):

ՍԻՆԷ ՎԷՊ: Պէյրութ, 1956 թ.ի Հոկտեմբերին: 30 էջ (29×22 սմ.): Լոյս տեսած է որպէս երկշաբաթաթերթ: Երկրորդ թիւը լոյս կը տեսնէ միայն 1957 թ.ի Յունուարին, 22 էջ (28×20 սմ.), երրորդ թիւը՝ նոյն տարուան Ապրիլին, 16 էջ (28×20 սմ.):

Առաջին թիւի պարագային, թէ՛ կողքին վրան եւ թէ՛ ներքին էջերուն մէջ գրուած է Սիմէ Վէպ: Երկրորդին կողքին վրայ գրուած է Սիմէ Աշխարհ, երրորդին՝ Սիմէ Սֆոփ: Սակայն երեքին ալ ներքին էջերուն մէջ միշտ Սիմէ Վէպ յիշատակութիւնը կայ: Վերջին թիւին մէջ գրուած է. «Սիմէ-Վէպի տէր եւ տնօրէն՝ Սարգիս Մազասճեան»: Թերթին հրատարակիչը այս ձեւին դիմած է, որովհետեւ թերթի պաշտօնական արտօնագիրը չէ ունեցած(80):

Կը յիշատակէ: **ԼՄԾՏ** (էջ 292) կը գրէ. «1940-ական բուսականներուն», Մինչդեռ լոյս տեսած է 1952 թ.ին:

78) Պէյրութ հրատարակուած եւ հրատարակուող բազմաթիւ բերքեր կան («Կարծիք», «Պապ-Ուխտի», «Զուարթնոց», «Միքանի Գօտիք», եւն.) որոնց չեմք անդրադառնար: Սակայն, անոնք որ հոս հրատարակուած են եւ հոս խմբագրուած՝ կը յիշատակեմք իբրևամահայ մամուլի մէջ: Ա. Տէր Խաչատուրեան յիշատակած է «Հայ Այնքապօքը (**ԼՄԾՏ**, էջ 293), սակայն «Վարագօք» ոչ: Մինչդեռ նոյն սկզբումս մեկնած, պէտք էր յիշատակած ըլլար նաեւ այս:

79) Ա. Կիրակոսեան կը յիշատակէ 1955-59 թթ.ը, առանց այլ մանրամասնութիւններու (**ՀՊՄՄ**, էջ 80): Իսկ Ա. Տէր Խաչատուրեան նախ երբեք չի յիշատակեր 1959 թ.ի լոյս տեսած շրջանը, իսկ Ա. շրջանին համար կու տայ հետեւեալ անհիշող բուսականը. 1955 Փետրուար - 1957 Սեպտեմբեր (**ԼՄԾՏ**, էջ 292 եւ **ԼՄ**):

80) Ա. Տէր Խաչատուրեան, հիմնուելով կողքին վրայ գտնուող տարրեր ա-

Հեռու - ԱԼ-ԵԱԲԶԱ: Զարթոնք օրաթերթի շաբաթական յա-
ւելուած, արարեքէնով: Պէյրուս, 1957 թ.ի Ապրիլի 17 - 1958 թ.ի
Մայիս(81):

ՆՈՐ ՍԻՆԵՄԱ (Հրատարակութիւն Լիբանանահայ Գրական
Շրջանակի): Լոյս տեսած՝ 2 թիւ. 1958 թ.ի Դեկտեմբերին, 52 էջ
(24×17 սմ.) եւ 1959 թ.ի Մարտին (72 էջ): Նմբադրութեան պա-
տասխանատու՝ Սարգիս Վահագն: Աշխատակիցներ՝ Լեւոն Թորոս-
եան, Զ. Մազաքեան, Եղիա Փիլաւճեան, Օ. Մարթայեան, եւն. (82):

ՀԱՅ ԱՆԹԷՊ (Պարբերաթերթ Ամերիկաբնակ Այնթապցիներ-
ու Միութեան): 1960 թ.ի Ապրիլ-Յունիսէն սկսեալ, Միացեալ Նա-
հանգներ: 1962 թ.ի Ապրիլին, թիւ 6-էն սկսեալ՝ կը հրատարակուի
Պէյրուս: Թիւ 7-էն (1962 թ.ի Յուլիս) սկսեալ թերթը կը խմբա-
գրուի նմանապէս Պէյրուսի մէջ: Մինչեւ 1971 թ. Գրիգոր Պողար-
եանն է խմբագիրը: 1972 թ.ին խմբագիրը կ'ըլլայ Երուանդ Պապայ-
եան: 1971 թ.էն սկսեալ թերթը կ'ունենայ նոր անուն - Նոր Այն-
թապ(83):

ԶԱԽԱՐԵԱՆ ՊՐԱԿ (Նմբագրուած եւ հրատարակուած Հ. Յ.
Դ. Զաւարեան Ուսանողական Միութեան կողմէ): Պէյրուս, 1961

ճումներու - «Սիմէ-Վէպ», «Սիմէ-Աշխարհ», «Սիմէ Սոփ» - վրայ, գանձք կը
նկատէ երեք անգամ քերթեր (ԼՄՅՏ, էջ 295 եւ ԼՄ):

81) Ա. Տէր Խաչատուրեան «Ալ-Խաֆա»-ի հրատարակութեան բուսականը
կը նկատէ 1958 (ԼՄՅՏ, էջ 295 եւ ԼՄ):

82) Ա. Կիրակոսեան «Նոր Սիմեմա» կը յիշատակէ եւ հրատարակութեան
բուսական կու տայ 1958-1959 եւ կը բուէ 2 թիւ, 1958 թիւ 12, 1959 թիւ 3, ո-
բովեան առաջինը լոյս տեսած է Դեկտեմբերին եւ երկրորդը՝ Մարտին (նման
սխալի մը անգրադարձման մասնապէս «Կայծ»-ի պարագային) (ՀՊՄՄ, էջ 409):
Կիրակոսեան այլ էջի մը մէջ (ՀՊՄՄ, էջ 436) կը յիշատակէ 1958 թ.ին լոյս տե-
սած «Սիմեմա» ամուսն քերթ մը, շատ հաւանաբար գայն շփոթելով «Նոր Սիմե-
մա»-ի 1958 թ.ի Դեկտեմբերի թիւին հետ: Իսկ լրագրներու բաժնին մէջ ալ կը
յիշատակէ «Նոր Սիմեմա» պարբերաքերթ մը 1957-59 թթ.ում: Ա. Կիրակոսեան
3 անգամ կ'անդրադառնայ նոյն քերթին, որպէս 3 տարբեր հրատարակութիւններ
եւ երեք անգամներում ալ անհիշող տեղեկութիւններ կը հայթայթէ: Գ. Շախլամ-
եան ալ կը յիշատակէ «Նոր Սիմեմա» մը 1957-59 թթ.ում (Պատմա-բանասիրա-
կան Հանդէս, 1964, ք. 3, էջ 161): Ե՛ւ Կիրակոսեան Ե՛ւ Շախլամեան փոխմանկ
Գրական Շրջանակի կը գրեն՝ Գրական Շրջան: Ա. Տէր Խաչատուրեան նախ կը
յայտնէ, թէ «Նոր Սիմեմա» լոյս տեսած է 1959 թ.ի Մարտին, 1 թիւ (ԼՄ), ա-
պա՝ 1959 թ.ին, 2 թիւ (ԼՄՅՏ, էջ 294):

83) Ըստ Ա. Կիրակոսեանի (ՀՊՄՄ, էջ 325) եւ Ա. Տէր Խաչատուրեանի
(ԼՄՅՏ, էջ 298), «Հայ Անթէպ»ը 1968-էն սկսեալ կը հրատարակուի Պէյրուս:

թ.ի Յունիսէն - 1962 թ.ի Մայիս: Ընդամէնը 5 թիւ: Մեքենագիր բաղմադրուած (33×21 սմ.):

Վերահրատարակուած՝ 1967 թ.ի Ապրիլին, մինչեւ 1969 թ., ընդամէնը՝ 3 թիւ: Փոխան Զաւարեան Պրակի, վերահրատարակուածները կոչուած են՝ Պրակ չ. Յ. Գ. Զաւարեան Ուսանողական Միութեան(84):

ԴԱՍՏԻԱՐԱԿ (Ամսաթերթ Հայ Աւետ. վարժարաններու Ուսուցչական Միութեան): Պէյրութ, 1963 թ.ի Յունուարի 15 - 1964 թ.ի Յունիս: Հիմնադրւր՝ Գ. Ինճէճիկեան. ունեցած է խմբագրական կազմ: Մեքենագիր բաղմադրուած (28×22 սմ.): Ընդամէնը՝ 12 թիւ(85):

ՄՇԱԿ (Պաշտօնաթերթ Լիբ. Ազգ. վարժարաններու Ուսուցչական Միութեան): Պարբերագիրք: Պէյրութ, 1964 թ.ի Նոյեմբեր - 1965 թ.ի Մայիս: Ընդամէնը՝ 6 գիրք (24×17 սմ.):

ՌԱՀՎԻՐԱՅ (Պարբերագիրք Հայ Կաթողիկէ Երիտասարդաց Միութեան): Պուրճ Համուտ, 1966 թ.: Ընդամէնը՝ 5 թիւ: 32-64 էջ (24×17 սմ.): Խմբագրական կազմ՝ Նշան վրդ. Քէչէեան, Դաւիթ Յ. Էվէրէկեան, Պետրոս Թէրզեան, Եւն.(86):

ՈՎԱՄԻՍ (Պարբերագիրք Բարդէն Սիւնի Պատանեկան Միութեան): Պէյրութ, 1964 թ.ի Մայիսին, Յունիս-Յուլիսին եւ 1965 թ.ի Մարտին: Առաջին երկուքը 24-ական էջ, երրորդը՝ 52 էջ (24×17 սմ.) (87):

1964 թ.ի առաջին թիւին մէջ գրուած է. «Բ. տարի թիւ 1 (13)»: Առաջին տարին կը համարուի 1925 թ.ի Մարտի 1-էն սկսեալ Պէյրութ լոյս տեսած Ովասիւր (Օրկան Սուրբահայ պատանիներու), որ

84) Ա. Տէր Խաչատուրեան կը գրէ. «(1961-1962 Մայիս): Յետոյ վերիբաւորակուած» (ԼՄՅՏ, էջ 292):

85) Ըստ Ա. Տէր Խաչատուրեանի՝ «1963 Յունուար - 1964 Ապրիլ» (ԼՄՅՏ, էջ 292):

86) Ա. Կիրակոսեան երբեք չի յիշատակեր «Ռեհվիրայ»-ն: Ա. Տէր Խաչատուրեան նախ առանց բուականի կը յիշատակէ միայն բերքին ամուսնը (ԼՄ), իսկ ուրիշ տեղ մը (ԼՄՅՏ, էջ 295) հրատարակութեան բուականին համար կ'ըսէ. «1960-ական բուականներուն»: Եղուարդ Գիւլբէկեանի համաձայն այն լոյս տեսած է 1961 թ.ին (Հայկական Մամուլի Ցուցակ, 1971, էջ 52) եւ կը շարունակէ լոյս տեսնել:

87) 1964-65 թթ.-ում լոյս տեսած «Ովասիս»-ը միայն Ա. Տէր Խաչատուրեանի մօտ յիշատակուած է: Սակայն հրատարակուած բուական տրուած է միայն 1964-ը (ԼՄՅՏ, էջ 294):

եղած է ամսագիրը եւ լոյս տեսած՝ 12 թիւ, Վարդան Գէորգեանի խմբագրութեամբ: Արտօնատէր՝ Նազարէթ Կէրկէրեան:

Անի (Պարբերագիրք: Հրատարակութիւն Անի Օթեակ թիւ 11-ի): Պէյրութ, 1967 թ. էն սկսեալ: Խմբագրական մարմին՝ Յ. Թօփճեան, Վ. Սիմոնեան, Ա. Աւետիսեան, Յ. Գասպարեան: Երկրորդ թիւէն սկսեալ Հ. Մերունեան կը փոխարինէ Վ. Սիմոնեանը: Աւելի ուշ, նոր փոփոխութիւններ կը կրէ խմբագրական կազմը: Էջադրութիւնը շարունակական է (24×17 սմ.) (88):

ՄեծէԱն (Պարբերաթերթ Պուրճ Համուտի Հ. Յ. Դ. Չաւարեան Աշակերտական Միութեան): Լոյս տեսած՝ 1 թիւ, 1969 թ. ի Մարտին (24×17 սմ.) (89):

Նոյն տղաքը տարի մը ետք կը հրատարակեն 2001-ը, որ ընդամէնը լոյս կը տեսնէ 9 թիւ, 1970 թ. ի Ապրիլին՝ 1971 թ. ի Մայիսը:

ԱՅՆՃԱՐ (Կրօնական, մանկավարժական, գիւղատնտեսական, հասարակագիտական պարբերաթերթ): Այնճար, 1969 թ. ի Մարտին-Յունիս: Ընդամէնը՝ 4 թիւ: 28-35 էջ (27×19 սմ.): Խմբագիրներ՝ Վ. Ա. Հերկեղեան, Հայկ Թիւլպեան, Ներսէս Ներսոյեան, եւ ուրիշներ:

ԵՐԻՏԱՍԱՍԴԴ. ՀԱՅ (Երկշաբաթաթերթ): 1969 թ. ի Դեկտեմբերի 27-էն սկսեալ (90): 40, 48, 32 էջ (27×20 սմ.): Ա. տարին (1970) լոյս տեսած՝ 26 թիւ: Բ. տարին (1971) եւ Գ. տարին (1972)՝ 20-ական թիւ: Դ. տարին (1973)՝ 23 թիւ: Դ. տարին ունեցած է Ե. Հ. մարզական յաւելում մը:

Առաջին երկու տարիներուն խմբագրական կազմի մաս կազմած են՝ Անդրանիկ Կոստեան, Ժիրայր Դանիէլեան, Յովսէփ Մելքոնեան, Պետրոս Թէրզեան, Լուիսի Թապալեան: Ապա, որոշ փոփոխութիւններ մտած են խմբագրական կազմին մէջ:

88) Այս պարբերագիրքին մասին Ա. Տէր Խաչատուրեան ոչ մէկ յիշատակութիւն ունի «Արտասահմանի Ներկայ Հայ Մամուլը» («Սփիւռքը Այսօր» Ցուցահանդէս, 1972) ցանկին մէջ: Բայց ԼՄՅՏի մէջ (էջ 291) կը յիշատակէ «1969-էն սկսեալ» «Անի» մը: Ա. Կիրակոսեան մասնակցական օրակի թիւ 11-ը կը շնորհէ թերթին 11-րդ համարին հետ (ՀՊՄՄ, էջ 202):

89) Ա. Տէր Խաչատուրեան կը գրէ. «1969 Մարտին սկսեալ» (ԼՄՅՏ, էջ 294): Միանգեռ միայն մէկ թիւ լոյս տեսած է «Մեհեմա»ը:

90) Ըստ Ա. Տէր Խաչատուրեանի՝ «1969 Դեկտ. ի 29-էն սկսեալ» (ԼՄՅՏ, էջ 285):

ՄԵՐ ՊԱՐԲԵՐԱԹԵՐԹԸ (Հրատ. Հայ Կաթողիկէ ժողովրդապետութեան - Ս. Գրիգոր-Ս. Եղիա): Պէյրութ, 1971 թ.ի Մարտ-Ապրիլէն 1972 թ.: Ընդամէնը՝ 3 թիւ (28·5×22 սմ.): Հայերէն, Փրանսերէն եւ արաբերէն բովանդակութեամբ:

ԼԻՔԱՆԱՆԱՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ ՆՈՐԱԳՈՅՆ ԱՆՈՒՆԵՐԸ

Անցնող երկու տարիներուն, լիբանանահայ մամուլը ունեցաւ թիւի աճ, շնորհիւ մի քանի նոր թերթերու լոյս ընծայուելուն: Անոնք են՝

ՏԱՐԵԳԻՐԳ ՀԱՅ ԱՒԵՏ. ԿէրթՄէնեան ՎԱՐԺԱՐԱՆԻ: Պէյրութ, 1971-72: Առանց էջադրութեան (27·5×20 սմ.): 1972-73 տարեշրջանին լոյս չէ տեսած:

ԲԱՆԲԵՐ (Լիբանանի Հայ Համալսարանաւարտներու միութեան): Պէյրութ, 1972 թ.էն սկսեալ: Ա. տարի, թիւ 1-ը լոյս տեսած՝ 1972 թ.ին: 64 էջ (27·5×20 սմ.): Երկրորդ թիւ մը լոյս տեսած՝ 1973 թ.ին:

ԱՌԱՋՆՈՐԴ (Չարեհ-Նուպար սկսուտական խումբի պարբերութիւն): Պէյրութ, 1973 թ.ի Մարտէն սկսեալ: Ա. թիւը մեքենագիր բաղմադրուած (25×22 սմ.): 1973 թ.ի Յունիսին եւ Սեպտեմբերին Բ. եւ Գ. թիւերը լոյս տեսած են տպագիր: 20 էջ (28×22 սմ.): Նմրագրական կազմ՝ Պերճ Արապեան, Տիրան Շաքլեան:

ԼՐԱՏՈՒ (Հայ Երիտասարդաց Ընկերակցութեան): Պէյրութ, 1973 թ.ի Դեկտ.ի 1-էն սկսեալ: Մեքենագիր բաղմադրուած: 12 էջ (27×10·5 սմ.):

A SHORT ACCOUNT OF THE ARMENIAN PRESS IN LEBANON

JIRAIR TANIELIAN

(Summary)

The Armenian press in Lebanon can boast a rich past. Despite this fact, it has not been given the comprehensive and serious consideration it deserves. The work of Ardashes Der Khatchadourian in the field is worthy of commendation, but it is not without shortcomings. A careful study of the Armenian press in Lebanon reveals that the first Armenian paper, named «Mioutune» (=Union) was handwritten in one copy in 1913 by the Armenian students of the American University of Beirut. It is further to be noted that those who have done research work in this field have failed to mention the names of some 35 publications that have been issued in Lebanon at various times to date. The comprehensive list of these publications is given here, with some corrections in connection with other papers already presented.